ԳԼՈԲՈՒՍ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

6

ԵՐԵՎԱՆ

2009

ԳԼՈԲՈՒՍ

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 6, 2009

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
Սնակ Սարուխանյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔ
Տաթևիկ Քարաուղլանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարեն Կարապետյան
Էլեկտրաէներգիան և՝ տարադրամ է,
և քաղաքական շահաբաժիններ 3

Մերգեյ Սարգսյան
Գազատարների աշխարհաքաղաքականությունը
Սևծովյան-կասպյան տարածաշրջանում 8

Միխայիլ Աղաջանյան
«Սևծովյան սիներգիա» ծրագիրը
և Հարավային Կովկասը 17

Նվեր Մելիքյան
Արարատյան արտեզյան ավազանի
արդի վիճակի մասին 25

Կարեն Վերանյան
World Bank Group, International Finance Corporation.
«Գործարարության» վարկանիշային
նախագիծը 2007-2010թթ. 31

Սնակ Սարուխանյան
Իրանի «ուղեղային կենտրոնները» 38

Թամարա Վարդանյան
Վրացացման գործընթացները Վրաստանում 44

Արաքս Փաշայան
Իսլամն Ադրբեջանի ներքաղաքական
զարգացումներում 51

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՆ Ե՛Վ ՏԱՐԱԴՐԱՄ Է, Ե՛Վ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ վարչության նախագահ Կարեն Կարապետյանի հարցազրույցը

- Պ-ն Կարապետյան, արտահանման ի՞նչ հնարավորություններ ունի Հայաստանի էլեկտրաէներգետիկան:

- Սկսեմ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ արտահանման հնարավորություններից: Այսօր ընկերությունը լրջորեն զբաղվում է էլեկտրաէներգետիկայով: Դա թելադրված է ռազմավարական նկատառումներով և այն ըմբռնմամբ, որ էլեկտրաէներգետիկան՝ որպես պրոֆիլային բիզնես, թույլ է տալիս ապահովել զգալի սիներգետիկ էֆեկտ: Պետք է ավելացնել նաև խոշոր գազաէներգետիկ օբյեկտների առկայությունը, ֆինանսական և նյութատեխնիկական պաշարներով մանևրելու հնարավորությունը: Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ առաջիկայում «ՀայՌուսգազարդը» կարող է դառնալ տարածաշրջանում էլեկտրաէներգիայի մատակարարման շուկայի առանցքային դերակատարներից մեկը:

Այժմ՝ հարցի էության մասին: Հայաստանի Հանրապետությունն էլեկտրաէներգիայի զգալի պաշարներ ունի՝ դրա արտահանումը կազմակերպելու համար: Խորհրդային տարիներին, երբ վճռվում էր ատոմակայանի կառուցման հարցը, Հայաստանի էներգահամակարգը նախագծվում էր որպես էներգահավելուրդային և բավարարում էր անդրկովկասյան տարածաշրջանի պահանջարկի մի մասը: Հայաստանը, որ սահմանակից է Ադրբեջանի, Վրաստանի, Իրանի և Թուրքիայի հետ, միակ երկիրն է, որ էլեկտրաէներգիա է արտահանում Անդրկովկաս: Այսօր Հայաստանի էլեկտրակայանների հզորության ընդամենը մեկ երրորդն է օգտագործվում: TACIS նախագծի շրջանակներում անցկացված հետազոտությունները ցույց տվեցին, որ վերջին 10 տարիներին Հայաստանի Հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի ավելցուկը՝ ըստ Էներգետիկայի կարգավորման մարմինների տարածաշրջանային ընկերակցության գնահատականի, կազմում է 1930 մվտ: Ինչ վերաբերում է արտահանմանը, ապա 2003-2005թթ. դրա ծավալներն զգալիորեն աճել են՝ հասնելով վերջին 10 տարիների առավելագույն նիշին և կազմելով երկրում

արտադրված էլեկտրաէներգիայի ավելի քան 16%-ը:

Մինչև 2006թ. առաջին եռամսյակը Հայաստանից արտահանվող էլեկտրաէներգիայի հիմնական շուկաներից մեկը Վրաստանն էր: Սակայն 2006թ. մարտից Վրաստան այլևս էլեկտրաէներգիա չի արտահանվում՝ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի կտրուկ անկման, Վրաստանի էներգահամակարգի արտադրահզորությունների նորոգման և վերականգնման, խոշոր ՀԷԿ-երի վերականգնման, ինչպես նաև Ադրբեջանից էլեկտրաէներգիայի ներմուծման պատճառով:

Իրանին էլեկտրաէներգիայի մատակարարման կազմակերպումը էներգետիկ համագործակցության հեռանկարային ուղղություն է: Երկու երկրների էներգահամակարգերն արդեն ավելի քան 10 տարի աշխատում են զուգահեռ ռեժիմով, և արտահանման ծավալներն Իրան՝ սկսած 2007թ., կազմում են ՀՀ-ից արտահանվող էլեկտրաէներգիայի ողջ ծավալի ավելի քան 70%-ը: Սահմանված 43 գվտ հզորության պարագայում Իրանի էներգահամակարգի դեֆիցիտը հասնում է 2 գվտ-ի, և առավելագույն պահանջարկի մասնակի բավարարումը ամռան ամիսներին իրականացվում է Հայաստանի և Ադրբեջանի էլեկտրահամակարգերի հետ էլեկտրաէներգիայի փոխանակման, ինչպես նաև Թուրքմենստանից էլեկտրաէներգիայի (մոտ 350 մվտ) ներմուծման հաշվին: Ներկայումս ավարտին են մոտենում Մարի-Մեշխեդ (Իրան-Թուրքմենստան) միջհամակարգային 400 կվ և 500 մվտ թողունակությամբ էլեկտրահաղորդագծերի (ԷՀԳ) շինարարական աշխատանքները, որը թույլ կտա ավելացնել ներմուծվող էլեկտրաէներգիայի ծավալները: Հայաստանի և Իրանի միջև էլեկտրաէներգիայի փոխանակումն իրականացվում է գործող երկշղթա Շինուհայր-Ագարակ-Ագար 220 կվ, 450 մվտ անվանական թողունակությամբ ԷՀԳ-ի միջոցով:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և իրանական «ՍԱՆԻՐ» ընկերության միջև կնքված պայմանագրի համաձայն, արդեն ավարտին են մոտենում ՀՀ և ԻԻՀ էներգահամակարգերի միջև նոր, 400 կվ-ի համար հաշվարկված ստանդարտով միջհամակարգային ԷՀԳ կառուցման աշխատանքները: **Նոր ԷՀԳ-ն թույլ կտա մինչև 1000 մվտ ավելացնել Իրան-Հայաստան միջհամակարգային ԷՀԳ ընդհանուր թողունակությունը:** Էներգետիկայի ոլորտի առաջնային խնդիրը՝ Իրանի հետ փոխհարաբերությունները առևտրային մակարդակ տեղափոխելն է, ինչը կապահովի ոչ միայն էլեկտրաէներգիայի փոխանակումը, այլև դրա վաճառքը և տարանցիկ փոխանակման կազմակերպումը երրորդ երկրներ:

Թուրքիայի հետ Հայաստանին կապում է միակ՝ 220 կվ Գյումրի-Կարս ԷՀԳ-ն 340 մվտ թողունակությամբ: ԷՀԳ-ն աշխատանքային վիճակի բերելու համար պահանջվում է ներդրումների ոչ մեծ ծավալ՝ «Գյումրի-2» (ՀՀ) ենթակայանում համապատասխան անջատիչ, ինչպես նաև «Կարս» (Թուրքիա) են-

թակայանում 220-154 կվ ավտոտրանսֆորմատոր տեղադրելու համար: Սակայն Թուրքիայի հետ քաղաքական տարաձայնությունների առկայությունը խոչընդոտում է էլեկտրաէներգիայի արտահանմանը: Քաղաքական իրավիճակը քիչ հավանական է դարձնում նաև Ադրբեջանի հետ էներգափոխանակման գործընթացների նախաձեռնումը: Այսպիսով, կարելի է փաստել, որ Հայաստանի էներգահամակարգի արտաքին առևտրային գործունեությունն այսօր սահմանափակվում է էլեկտրաէներգիայի պարբերական հանդիպական մատակարարումներով՝ դեպի Իրան և հակառակը:

- Մրցունա՞կ է արդյոք «հայկական» կիլովատը տարածաշրջանում, և ո՞ր երկրներն են համարվում էլեկտրաէներգիայի հավանական ներմուծողներ:

- Բնական գազի մրցունակ գների և էլեկտրաէներգիայի արտադրության արդյունավետորեն հավասարակշռված կառուցվածքի առկայությունը վկայում է, որ «հայկական» կիլովատը տարածաշրջանում բավական մրցունակ է: Հաշվի առնելով Հայաստանի Էլեկտրաէներգիայի հանդիպական մատակարարումների երկարաժամկետ պարտավորությունները՝ ի հաշիվ Իրանից Հայաստան ներմուծվող բնական գազի ծավալների, էլեկտրաէներգիայի ծավալները Հայաստանի էներգահամակարգից Վրաստանի, Թուրքիայի և Իրանի էներգահամակարգերի մատակարարման համար ընդհանուր առմամբ կարող են կազմել տարեկան 6 և ավելի մլրդ կվտ/ժ: ՀՀ հարևան երկրներում նկատվում է արտադրահզորությունների դեֆիցիտ, որը հեռանկարում կդառնա էլ ավելի շոշափելի:

Ներկայիս տարեկան 8,5 մլրդ կվտ/ժ սպառման մակարդակի պայմաններում Վրաստանում կանխատեսվում է էներգառեսուրսների, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի սպառման աճ: Նույնիսկ նոր հզորությունների ենթադրվող գործարկման դեպքում դրանց տարեկան դեֆիցիտը առաջիկա 3-5 տարիներին կպահպանվի և կկազմի 250-500 մվտ: Այնպես որ՝ ստեղծված պայմաններում Վրաստանը կարելի է համարել Հայաստանի էլեկտրակայաններում արտադրվող էլեկտրաէներգիայի սպառման հիմնական պոտենցիալ շուկաներից մեկը:

Թուրքիայի էլեկտրաէներգիայի շուկան ամենաարագ աճողներից է: Եվրոպական հանձնաժողովի փորձագետների գնահատմամբ՝ Թուրքիայի էլեկտրաէներգետիկայի հատվածում կատարվող ներդրումները կարող են բավարարել միայն 2009թ. պահանջարկը, իսկ հետո նա ստիպված կլինի էլեկտրաէներգիա ներմուծել՝ եթե ներդրումներ չսկսվեն անկախ էներգետիկ նախագծերում: 2009թ. հետո ազգային էլեկտրացանցում անհրաժեշտ կլինի տարեկան ավելացնել առնվազն 4 հազար մվտ հզորություն կամ ներգրավել առնվազն $4 մլրդ ներդրումներ: Թուրքիայի էներգետիկայի և բնական պա-

շարների նախարարությունը հայտարարում է մոտակա 5 տարիներին երկրի էներգետիկ հատվածում $20 մլրդ ներդրումների անհրաժեշտության մասին: 2020թ. անհրաժեշտ կլինի շահագործման մեջ մտցնել 51000 մվտ նոր արտադրահզորություններ, իսկ էլեկտրաէներգիայի սպասվող պահանջարկը 2020թ. կհարկադրի ներդրումների ծավալն ավելացնել մոտավորապես մինչև $130 մլրդ-ի: Բացի այդ, Թուրքիան ունի էլեկտրաէներգիայի սպառման աճի զգալի պոտենցիալ (որն ամերիկյան EIA ընկերակցության կանխատեսումներով՝ 2020թ. կհասնի 192 մլրդ կվտ/ժ-ի) և թերզարգացած էլեկտրաէներգետիկ հատված: Արտադրահզորությունների մեծ մասը և բաշխիչ ցանցերը գտնվում են պետության հսկողության տակ, սեփականաշնորհումն այս հատվածում իրականացվում է դանդաղ, ոլորտին անհրաժեշտ են երկարաժամկետ ներդրումներ: Թուրքիայում ներմուծվող էլեկտրաէներգիայի պահանջարկի բարձրացման հավանականությունը միջնաժամկետ հեռանկարում գնահատվում է որպես բարձր:

Ինչ վերաբերում է Իրանին, ապա պետք է նշել, որ վերջին տարիներին ԻԻՀ-ում նկատվում է էլեկտրաէներգիայի ներմուծման կտրուկ աճ (1998-2004թթ. միջին տարեկան աճը կազմել է 136%), իսկ 2002-ից Իրանը դառնում է զուտ էլեկտրաէներգիա ներմուծող երկիր: Իրանն էլեկտրաէներգիայի առևտուր է անում Ադրբեջանի (արտահանում երկրի արևմտյան մաս), Հայաստանի, Պակիստանի, Թուրքիայի և Թուրքմենստանի (արտահանում և ներմուծում) հետ:

Էլեկտրաէներգիայի սպառման արագ աճի (2008թ. տարեկան 7-9% մինչև 190 մլրդ կվտ/ժ) պայմաններում Իրանն ինտենսիվորեն նոր էներգետիկ հզորություններ է կառուցում: Հայտարարվել է հետագա 5 տարիներին էլեկտրակայանների առկա հզորությունները 18 գվտ-ով ավելացնելու ծրագրերի մասին: Էներգետիկայի հատվածում զգալի պետներդրումների շնորհիվ վերջին տարիներին սկսեցին գործել մի քանի նոր էլեկտրակայաններ (առավելապես հիդրոէլեկտրակայաններ և խառը ցիկլով աշխատող էլեկտրակայաններ): Մասնավորապես, արդեն 2009թ. երկրի առաջին՝ «Բուշեհր» ատոմակայանը իրանական էներգահամակարգ կմատակարարի 500 մվտ էլեկտրաէներգիա: Չնայած այս ծավալուն էներգետիկ շինարարությանը, արդեն այսօր Իրանի էներգետիկ հզորությունների դեֆիցիտը կազմում է 2500 մվտ, և տարեցտարի այն ավելանում է: Իրանն ունի երկրի էներգահամակարգը Ադրբեջանի, Թուրքմենստանի, Թուրքիայի, Իրաքի և Հայաստանի համակարգերի հետ կապող միջպետական գծեր (արդեն կառուցվում է երրորդ բարձրավոլտ հաղորդագիծը՝ 400 կվ նախագծային հզորությամբ և 312 կմ երկարությամբ, բացի գոյություն ունեցող գծերից Ագարակում և Շինուհայրում՝ 110 և 220 կվտ հզորություններով): Հզորությունների դեֆիցիտի նման իրավիճակ է տիրում Իրա-

քում, որը ստիպված է էլեկտրաէներգիա ներմուծել Իրանից և Թուրքիայից: Նույնիսկ ածխաջրածնային ռեսուրսների զգալի պաշարների առկայությունը տարածաշրջանի մի շարք երկրներում և կարճաժամկետ ծրագրով Վրաստանի, Թուրքիայի և Իրանի էլեկտրաէներգետիկ ոլորտում նոր արտադրահզորությունների ստեղծումն ի զորու չեն բավարարելու էլեկտրաէներգիայի կանխատեսվող պահանջարկը:

Ակնհայտ է, որ Հայաստանի էլեկտրաէներգետիկայի ոլորտն ունի արտահանման բարձր պոտենցիալ և, չնայած սեփական հումքային բազայի բացակայությանը, տարածաշրջանում որոշակի մրցակցային առավելություն ունի: Պետության խելամիտ արտաքին քաղաքականության ձևակերպումն ու վարումը կարող են իրապես տնտեսական և դրա հետ մեկտեղ՝ քաղաքական շահաբաժիններ բերել Հայաստանին:

«Գոլոս Արմենիի», N 122, 10.11.2009թ.

ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԾՈՎՅԱՆ-ԿԱՍՊՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Սերգեյ Սարգսյան

Մաս 3. Գազ արտադրողները և սպառողները

Գազատարների շուրջ վարվող քաղաքականության հեռանկարները, խողովակաշարային ցանցի փոխդասավորությունը որոշակի չափով կախված են հումքի պաշարների առկայությունից, տարածաշրջանի երկրների միջև դրանց բաշխումից, այդ երկրների տնտեսությունների գազարդյունահանող և վերամշակող ճյուղերի գործառնության կայունությունից, արդեն կնքված պայմանագրերի բովանդակությունից: Ի՞նչ ծավալների են տիրապետում և ինչպե՞ս են դրանք տնօրինում մերձկասպյան պետություններն այսօր:

Թուրքմենստան

2007թ. հուլիսին չինական *China National Petroleum (CNPC)* ընկերությունը ձեռք բերեց Թուրքմենստանի ամենահեռանկարային գազահանքերից մեկի՝ Բախտիարի գործարկման արտոնագիրը: Դրա պաշարները, չինական և թուրքմենական փորձագետների կարծիքով, պետք է բավականացնեն դեպի Չինաստան (Թուրքմենստան-Ուզբեկստան-Ղազախստան-Ուրումչի-Շանհայ) տանող նոր գազատարը լիցքավորելու համար, որով, սկսած 2009թ., Աշգաբադը 30 տարվա ընթացքում տարեկան 30 մլրդ մ^3 գազ է արտահանելու Չինաստան: Դրանով իսկ Թուրքմենստանը պարտավորվել է գազ մատակարարել.

- Ռուսաստանին, 2003թ. 25 տարով կնքված պայմանագրի համաձայն, տարեկան 50 մլրդ մ^3՝ արտահանումն աստիճանաբար ավելացնելով և արդեն 2028թ. հասցնելով 90 մլրդ մ^3-ի:
- Իրանին, մինչև 2018թ. տարեկան 8 մլրդ մ^3 (ծրագրվում է մատակարարումներն աստիճանաբար հասցնել մինչև 12-14 մլրդ մ^3-ի, իսկ հետագայում՝ տարեկան 20 մլրդ մ^3-ի):
- Չինաստանին, սկսած 2009թ.՝ 30 տարի ժամկետով, տարեկան 30 մլրդ մ^3 ծավալով:

ՉԺՀ-ի հետ պայմանագրի կնքումը որոշակի ինտրիգ մտցրեց ոչ միայն հենց Թուրքմենստանից, այլ նաև Կենտրոնասիական ողջ տարածաշրջանից գազարտահանման հեռանկարների և գազամատակարարման առկա պարտավորությունների կայունության հարցում, ինչն ամենաանմիջական ձևով կարող է անդրադառնալ տարածաշրջանից ձգվող նոր գազատարների (առաջին հերթին՝ երկուսն էլ տարեկան 30 մլրդ մ³ հզորություն ունեցող Անդրկասպյան և *Nabucco* գազատարների) կառուցման պլանների կենսունակության վրա:

Աղյուսակ1

Բնական գազի արտադրությունն ու սպառումը Թուրքմենստանում[1], մլրդ մ³

	2006թ.	2007թ.	2008թ.
Գազի արդյունահանումը	60,4	65,4	66,1
Ներքին սպառումը	18,4	21,3	19,0
Հաշվեկշիռը	+ 42,0	+ 44,1	+ 47,1

Ինչպես ռուսաստանյան, այնպես էլ արևմտյան փորձագետների գնահատականներով՝ Թուրքմենստանի գազահանքերի ընդհանուր պոտենցիալը չի գերազանցում 15,5 տրլն մ³-ը (նկատի են առնված ընդհանուր՝ հաստատված, հետախուզված և կանխատեսվող պաշարները), թեև 2007թ. վերջին նախագահ Գ.Բերդիմուհամեդովը հայտարարեց 42-44 տրլն պաշարների առկայության մասին: Թուրքմենստանում գազի պաշարների վերաբերյալ անկախ, ամբողջական և օբյեկտիվ տեղեկատվություն չկա: Ս.Նիյազովի պատվերով 2005թ. ամերիկյան *DeGolyer & MacNaughton* ընկերության (Դավլեթաբադի հանքավայրի վերաբերյալ) և բրիտանական *Gaffney, Cline & Associates-ի* (երկրի արևելյան հատվածի հանքավայրերի վերաբերյալ) անցկացրած աուդիտի արդյունքներն այդպես էլ չհրապարակվեցին, այլ հնչեցվեցին միայն պաշտոնական անձանց հայտարարություններում: Այդ տվյալներով՝ Դավլեթաբադի հանքավայրի պաշարները սկզբնապես կազմել են մոտ 4,5 տրլն մ³, հետագայում այդ թիվն իջեցվել է մինչև 1,3 տրլն-ի: Իսկ որոշ փորձագետներ հակված են դրանք գնահատել 500-600 մլրդ մ³-ի սահմաններում:

Քանի որ հանքավայրը միջազգային սերտիֆիկացում չուներ, հերթական անգամ հետաձգվեցին տարածաշրջանից ձգվող ևս մեկ գազատարի՝ Անդրաֆղանականի (Թուրքմենստան-Աֆղանստան-Պակիստան-Հնդկաստան, ԹԱՊՀ) շինարարության հեռանկարների վերաբերյալ 2008թ. հոկտեմբերին նախատեսվող բանակցությունները:

[1] *Statistical Review of World Energy.* www.bp.com, 2009.

2008թ. Գ.Բերդիմուհամեդովի հանձնարարությամբ *Gaffney Cline & Associates* խորհրդատվական ընկերությունը գնահատեց երկրի հարավ-արևելքում գտնվող «Գունորթա Յոլոթեն», «Օսման» և «Յաշլար» հանքավայրերի պաշարները, ինչը թույլ տվեց խոսել դրանց հսկայական պոտենցիալի մասին՝ 4,5-14 տրլն մ³ գազ, այսինքն՝ Թուրքմենստանը Ռուսաստանից հետո երկրորդն էր դառնում գազի համաշխարհային պաշարների գծով: Սակայն այդ թվերը ճշգրտման կարիք ունեն, իսկ հանքավայրերը՝ վերահետախուզման:

Իսկ Ջիմ Գիլեթի *(Jim Gillett)*՝ *Gaffney Cline & Associates* ընկերության բիզնեսի զարգացման գծով տնօրենի հայտարարությունը, թե այդ հանքավայրերից արդյունահանվող գազը տարեկան կարող է հասնել 70 մլրդ մ³-ի, կարող է հանգստացնել արդեն կնքված պայմանագրերով գազ ստացողներին, բայց բավարար հիմք չէ (տնտեսական տեսակետից) նոր խոշոր պայմանագրեր կնքելու համար:

Սակայն թուրքմենական գազահանքերի վարկանիշի բարձրացման հեռանկարը, անշուշտ, էլ ավելի կմեծացնի աշխարհաքաղաքական բոլոր դերակատարների ուշադրությունն Աշգաբադի նկատմամբ:

Թուրքմենստանի էներգետիկ ոլորտի հիմնախնդիրներից է նաև այն, որ երկրի գազարդյունահանող ճյուղը մշտապես չի կատարում գազի արտադրությունն ավելացնելու ծրագրված խնդիրը, ինչը հանգեցրել է, մասնավորապես, 2007թ. արդյունահանման պլանների էական կրճատման. արդյունահանված 67,4 մլրդ-ից արտահանվել է 45,5 մլրդ մ³: 2009թ. պլանային արդյունահանման մակարդակը հասցվել է 2007թ. ցուցանիշներին՝ 75 մլրդ մ³:

Աղյուսակ 2

Թուրքմենստանում գազի արտադրության թերակատարումը, մլրդ մ³

	2006թ.	2007թ.	2008թ.
Պլանը	80	75	81,5
Արդյունահանված է	62,2	67,4	66,1
Հաշվեկշիռը	-17,8	-7,6	-15,4

Նոր գազատարների (Թուրքմենստան-ՉԺՀ՝ 2009-ից, Մերձկասպյան՝ 2010-ից) գործարկման պահին Աշգաբադը պետք է տարեկան առնվազն 35 մլրդ մ³-ով (ներկայում արդյունահանվող ծավալի ավելի քան 50%-ով), իսկ հետագայում՝ միայն ռուսական ու չինական նախագծերով, ևս 40-50 մլրդ մ³-ով ավելացրած լինի արդյունահանումը:

Ղազախստան

Ղազախստանում ևս գազի լրացուցիչ ծավալների արդյունահանման հեռանկարների հետ կապված (հյուսիսային՝ ռուսական և արևելյան՝ չինական ուղղություններում) խնդիրներ են առաջացել:

Աղյուսակ 3

Բնական գազի արտադրությունը և սպառումը Ղազախստանում[1], մլրդ մ³

	2006թ.	2007թ.	2008թ.
Գազի արդյունահանումը	23,9	26,4	30,2
Ներքին սպառումը	20,3	19,5	20,6
Հաշվեկշիռը	+ 3,6	+6,9	+ 9,6

Ղազախստանը պարտավորվել է Մերձկասպյան գազատարն ապահովել տարեկան 10 մլրդ մ³ գազով և այդ ծավալն ուղղել դեպի Չինաստան տանող գազատարը (Բեյնեու-Շիմքենդ):

Ներկայումս, բացի Կարաչագանակ հանքավայրից, որն արտահանվող գազի հիմնական աղբյուրն է, առավել հեռանկարային նախագիծ է համարվում Քաշագանի հանքավայրը. 2010թ. այն կարող է ապահովել 10 մլրդ մ³ հզորություն, իսկ 2015-ին՝ հասնել առավելագույն արտադրողականության՝ 25 մլրդ մ³-ի:

Սակայն Ղազախստանը բավական լուրջ խնդիրներ ունի գազի արտադրության ծավալների ավելացման հետ կապված:

Նախ՝ երկրում արդյունահանվող գազի մոտ 70%-ը «ուղեկից» է համարվում. արդյունահանվում է Կարաչագանակի, Քաշագանի և Թենգիզի նավթահանքերից: Այն ապրանքային տեսքի բերելու համար պահանջվում է լրացուցիչ զտում, ինչը հանգեցնում է ոչ միայն արտադրության ինքնարժեքի թանկացման, այլև դրա իրական ծավալների նվազման:

Բացի այդ, «ուղեկից» գազն ավելի շահավետ է հետ մղել հորատանցքերը՝ դրանց արտադրողականությունը բարձրացնելու նպատակով:

Երկրորդ՝տարեկան 4 մլրդ մ³ գազ վերամշակվելով վերածվում է հեղուկ բնական գազի:

Երրորդ՝ Ղազախստանն ինքն է Ուզբեկստանից տարեկան ավելի քան 2 մլրդ մ³ գազ ներմուծում երկրի հարավային շրջաններն ապահովելու համար (մինչճգնաժամային կանխատեսումներով՝ 2008թ. ներմուծման ծավալը պետք է ավելացվեր մինչև 3,5 մլրդ մ³-ի): Այս շրջաններին ղազախական գազի մատակարարման ծրագրի կատարման համար, ինչը նախատեսված է, մասնա-

[1] *Statistical Review of World Energy.* www.bp.com, 2009.

վորապես, դեպի Չինաստան տանող գազատարի շինարարության նախագծի շրջանակներում, կպահանջվի գազի լրացուցիչ ծավալների «շեղում»:

Չորրորդ՝ մյուս առավել խոշոր, զուտ գազահանքերն անդրսահմանային են. Իմաշևյան գազակոնդենսատային հանքավայրը գտնվում է Ղազախստանի՝ Ռուսաստանի Աստրախանի մարզին սահմանակից Ատիրաուի մարզում, Խվալինյանը և Կենտրոնականը՝ ՌԴ և Ղազախստանի՝ Հյուսիսային Կասպիայի կենտրոնական մասի ծովային սահմանին:

Այս հանքավայրերը և՛ Մոսկվայի, և՛ Աստանայի համար շահավետ է համատեղ մշակել՝ արտադրանքի բաժանման շուրջ համաձայնության հիման վրա: Բայց ռուսական և ղազախական ընկերությունների մասնակցության փոխդասավորությունը դեռ վերջնականապես որոշված չէ, և չի բացառվում, որ Մոսկվան գիտակցաբար է ձգձգում հանքավայրերի գործարկման շուրջ պայմանագրերի կնքումը՝ սպասելով ավելի շահեկան տնտեսական և քաղաքական իրավիճակի:

Ադրբեջան

Աստանային և Աշգաբադին «եվրոպական» գներով գազ գնելու համանման առաջարկով 2008թ. հունիսի սկզբին Մոսկվան դիմեց նաև Բաքվին: Այս առաջարկը տնտեսական տեսակետից.

- Բավական հրապուրիչ է. առաջարկությունն արվելու պահին Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը (ԱՊՆԸ) Թուրքիային Բաքու-Թբիլիսի-Էրզրում (ԲԹԷ) գազատարով մատակարարվող գազը վաճառում էր հազար մ^3-ն ընդամենը $120-ով, այն դեպքում, երբ «Գազպրոմը» գազը Եվրոպայում վաճառում էր $350-370-ով:
- Տեխնիկական առումով դա լիովին իրականանալի է՝ «ռևերսային ռեժիմով» աշխատեցնելով դատարկ (2006թ. հետո, երբ Բաքուն հրաժարվել էր գնել ռուսաստանյան գազը նոր, ավելի բարձր սակագներով և անցել սեփական հանքավայրերի գազն օգտագործելուն), տարեկան 5 մլրդ մ^3 թողունակություն ունեցող Մոզդոկ-Բաքու գազատարը, որն աննշան ներդրումների պարագայում կարելի է ավելացնել մինչև 8 մլրդ մ^3-ի:

Շահ Դենիզ հանքավայրի գազի արդյունահանման «Փուլ-1»-ի շրջանակներում 2006թ. աշնանը գնման պայմանագրեր կնքեցին Թուրքիան՝ տարեկան 6,3 մլրդ, Ադրբեջանը՝ 1,5 մլրդ և Վրաստանը՝ 0,8 մլրդ մ^3: 2006թ. ռուսաստանյան գազի գների բարձրացումից և այն բանից հետո, երբ 2007թ. Ադրբեջանը հրաժարվեց գազ ներմուծել, բոլոր կողմերի համաձայնությամբ ադրբեջանական քվեն թուրքականի հաշվին ավելացավ մինչև տարեկան 3 մլրդ մ^3-ի:

Աղյուսակ 4

Ադրբեջանում բնական գազի արտադրությունը և սպառումը[1], մլրդ մ³

	2006թ.	2007թ.	2008թ.
Գազի արդյունահանումը	6,1	9,8	14,7
Ներքին սպառումը	9,1	8,0	9,3
Հաշվեկշիռը	- 3,0	+ 1,8	+ 5,4

Ըստ կանխատեսումների՝ Շահ Դենիզ[2] նախագծի «Փուլ-2»-ի իրականացումից հետո, 2012թ. գազի արդյունահանումը երկրում կհասնի տարեկան 20 մլրդ մ³-ի (առավել լավատեսական գնահատականներով՝ տարեկան 25 մլրդ մ³): Ադրբեջանի ընդհանուր արտահանական պոտենցիալն այդ ընթացքում կհասնի տարեկան 10-12 մլրդ մ³-ի, ինչն, այնուամենայնիվ, բավարար չի լինի Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարի լիակատար բեռնման համար (16 մլրդ մ³):

Ադրբեջանի համար գազի գները բարձրացնելով՝ Ռուսաստանը ոչ միայն ստիպեց Բաքվին հրաժարվել դրա ներմուծումից, այլև փաստորեն նվազեցրեց նրա արտահանական պոտենցիալը, ինչը թույլ չտվեց Բաքվին հասնել Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը բեռնել նախագծային՝ 16 մլրդ մ³ հզորությամբ: Դա ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական նշանակություն կունենար, սակայն դրական դեր պետք է խաղար դրա ներդրումային գրավչության հետագա բարձրացման առումով:

ԲԹԷ-ն Ադրբեջանի համար քաղաքական մեծ նշանակություն ունի, և Մերձկասպյան բոլոր պետություններից ռուսաստանյան առաջարկին (էական, այլ ոչ թե զուտ խորհրդանշական ծավալներով[3]) դրական պատասխանելու ամենաքիչ շանսը հենց Բաքուն ունի:

Նշենք, որ միայն Եվրոպան և Ռուսաստանը չեն, որ հավակնություններ ունեն Ադրբեջանի գազի նկատմամբ. Շահ Դենիզի գազը գնելու ցանկություն ունի նաև Թեհրանը, որը 10% մասնաբաժին ունի այս նախագծում[4]:

---

[1] *Statistical Review of World Energy.* www.bp.com, 2009.

[2] Շահ Դենիզ նախագծի «Փուլ-2»-ով գազարդյունահանումը նախատեսվում էր 2012թ., սակայն տնտեսական և քաղաքական պատճառներով դա կարող է հետաձգվել մի քանի տարով՝ ընդհուպ մինչև 2016թ.:

[3] 2009թ. հունիսին «Գազպրոմը» համաձայնագիր ստորագրեց ԱՊՆԸ-ի հետ ադրբեջանական գազի մատակարարումների վերաբերյալ: 2010թ. հունվարի 1-ից գնումների ծավալը կկազմի տարեկան 500 մլն մ³: http://www.oilcapital.ru/news/2009/09/151518_144149.shtml

[4] Շահ Դենիզ հանքավայրի վերաբերյալ պայմանագիրը կնքվել է 1996թ. հունիսի 4-ին և ուժի մեջ մտել նույն թվականի հոկտեմբերի 17-ին: Մասնակիցներն են բրիտանական *BP Amoco-ն*՝ 25,2% մասնակցությամբ, *Statoil-ը* (25,5%), Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը (10%), ռուսաստանյան *Lukoil -ը* (10%), ֆրանսիական *Elf-ը* (10%) և թուրքական *TPAO-ն* (9%):

***

Կասպյան տարածաշրջանի գազի համար «եվրոպական գին» առաջարկելով՝ Ռուսաստանը վերացրեց դրա արտահանման ուղղության ընտրության տնտեսական բաղադրիչը և հարցը տեղափոխեց քաղաքական հարթություն: Թեև գազ արտադրող երկրները հասկանում են Մոսկվայի ռազմավարական մտադրությունը՝ պահպանել տարածաշրջանի գազատար ցանցի հիմնական փոխդասավորությունը, նրանք իրենց համար քաղաքական որոշ առավելություններ ձեռք բերելու իրական հնարավորություն են ստացել, ընդ որում՝ շահագրգիռ բոլոր կողմերից.

- Մոսկվայի հետաքրքրությունն ադրբեջանական գազով կարող է երևալ առաջին հերթին Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշման շտկմամբ: Ինչ վերաբերում է *Nabucco* գազատարին, ապա Ադրբեջանի գազը կարող է ունենալ միայն լրացուցիչ լցարկողի դեր, ինչը խոցելի է դարձնում նրա դիրքը շահագրգիռ կողմերի հետ բանակցություններում և այն կախման մեջ դնում կենտրոնասիական մատակարարների որոշումից:
- Թուրքմենական գազի գործոնը կարող է խթանել ԵՄ և ԱՄՆ հանդուրժողական վերաբերմունքը Աշգաբադի ավտորիտար իշխանության, պետության քաղաքացիների իրավունքների և ազատությունների խախտումների նկատմամբ: Միևնույն ժամանակ, չի բացառվում, որ Աշգաբադը, առաջին հերթին Չինաստանի կողմից իր գազի բարձր պահանջարկի պայմաններում, կարող է հարկադրված լինել (եթե ոչ քաղաքական, ապա տեխնիկական պատճառներով), այնուամենայնիվ, մասնակիորեն վերանայել մինչ այդ կնքված պայմանագրերը, և առաջին հերթին՝ Ռուսաստանի հետ: Դրա առիթ կարող է հանդիսանալ, օրինակ, հերթական միջադեպը գազարտահանման համակարգում, ինչպես խողովակաշարի պայթյունն էր ս.թ. ապրիլին[1]: Եվ թվում է, թե Թուրքմենստանում իշխանափոխության և Սափարմուրադ Նիյազովի ողջ «ժառանգության» վերանայման հետ կապված՝ բացասական իմիջային կորուստներն Աշգաբադի համար՝ որպես գործընկերոջ, առանձնակի նշանակություն չեն ունենա:

[1] 2009թ. ապրիլի 8-ի լույս 9-ի գիշերը Թուրքմենստանում, «Միջին Ասիա-Կենտրոն» (ՄԱԿ) գազատարի 487 կիլոմետրում տեղի ունեցած պայթյունի հետևանքով դադարեցվեց գազի մատակարարումը Ռուսաստանին: Թուրքմենստանի ԱԳՆ-ն իր տարածած հայտարարության մեջ մեղադրեց «Գազպրոմի» դուստր՝ «Գազպրոմ էքսպորտ» ընկերությանը պայթյունի համար պայմաններ ստեղծելու մեջ: Թուրքմենական կողմի կարծիքով՝ «Գազպրոմ էքսպորտը» կրճատել էր ՄԱԿ-ից վերցվող գազի ծավալները, ինչն էլ հանգեցրել էր գազաբաշխիչ ցանցի բեռնվածության աճի: http://www.lenta.ru/news/2009/04/10/gas/

Ռուսաստանը որոշակի խնդիրներ կարող է ունենալ նաև Կենտրոնական Ասիայի առավել ինքնուրույն և ինքնաբավ պետության՝ Ղազախստանի հետ, սակայն այստեղ ևս Մոսկվայի գործերը հեռու են անհուսալի լինելուց:

Նախ՝ Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևը, լավ գիտենալով Չինաստանի ախորժակը (և ոչ միայն էներգակիրների մատակարարման բնագավառում), հասկանում է իր երկու հարևանների՝ Ռուսաստանի և Չինաստանի շահերի միջև զգույշ հավասարակշռվելու անհրաժեշտությունը:

Երկրորդ՝ նկատի ունենալով Ն.Նազարբաևի անձնական բարձր ակտիվությունը աշխարհաքաղաքական (Եվրասիական տնտեսական ընկերակցություն) և աշխարհատնտեսական (սիբիրյան գետերի շրջումը դեպի Կենտրոնական Ասիա) խոշոր նախագծերում՝ ներկայումս նրա համար բացառիկ կարևորություն է ներկայացնում ոչ միայն 2010թ. ԵԱՀԿ-ում Ղազախստանի նախագահության հեռանկարի հարցը, այլև Ռուսաստանի հետ համատեղ «Եվրասիա» ջրանցքի կառուցման նախագծի իրականացումը, որն ուղղակիորեն կմիացներ Կասպից և Սև ծովերը, որի հեռանկարային շահավետությունն անպայմանորեն կհետաքրքրի Մոսկվային:

Այս նախագծի իրականացումը թույլ կտար Ղազախստանին սպառողներին անմիջականորեն մատակարարել ոչ միայն էներգակիրներ և նավթամթերքներ, այլ նաև երկրի արտահանական արտադրանքի ողջ տեսականին: Այս դեպքում Ղազախստանը հավելյալ գրավչություն ձեռք կբերի առաջին հերթին Հարավային և Հարավարևելյան երկրների ու Չինաստանի համար՝ որպես անընդհատ աճող բեռնահոսքերի տարանցման երկիր:

Ռուսաստանն, իր հերթին, որոշակի տնտեսական շահաբաժիններին զուգընթաց, այդ տրանսպորտային տարանցման հոսքերը կպահպանի իր համար կարևոր ռազմավարական հսկողության տակ:

Բացի այդ, Ղազախստանի և Ուզբեկստանի միջև առկա ոչ միայն տնտեսական, այլ նաև աճող քաղաքական մրցակցությունը տարածաշրջանային առաջատարության համար Մոսկվային թույլ է տալիս Տաշքենդն օգտագործել ինքնատիպ սահմանափակիչի դերում, որպեսզի Կենտրոնական Ասիայի պետությունները չափից ավելի ինքնուրույն քաղաքականություն չվարեն: Ամենանշանակալի մարդկային պոտենցիալ (մոտ 27 մլն մարդ) և գրեթե բոլոր հարևանների հետ տարածքային վեճեր ու խնդիրներ ունեցող Ուզբեկստանը միանգամայն հարմար է այդ դերին:

Վերջին ժամանակներս Իսլամ Քարիմովին անթաքույց զայրացնում է այն, որ Նուրսուլթան Նազարբաևը ջանում է, շրջանցելով Ուզբեկստանն ու անտեսելով Թուրքմենստանի պասիվությունը[1], ստեղծել Կենտրոնաասիական

[1] Ինքնամեկուսացումից Թուրքմենստանի աստիճանական դուրս գալու համատեքստում Աշգաբադը վերջին ժամանակներս նույնպես հետաքրքրություն է ցուցաբերում Աստանայի այս նախաձեռնության նկատմամբ:

պետությունների միություն, դրանում շահագրգիռ Տաջիկստանի և Ղրղզստանի մասնակցությամբ:

Միևնույն ժամանակ, Կասպից ծովի գազի արտահանման երթուղիների աշխարհաքաղաքական խաղը պետք է հաշվի առնի նաև համեմատաբար ինքնուրույն բազմաթիվ դերակատարների՝ Ղազախստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի[1], Ադրբեջանի, Իրանի և Թուրքիայի դիրքերը:

Գազ արտահանող երկրների առավել համաձայնեցված դիրքորոշումների նպատակով Ռուսաստանը, ինչպես «մաքուր էջից», այնպես էլ Եվրասիական տնտեսական ընկերակցության և ՇՀԿ շրջանակներում, շարունակում է մի ինչ-որ վերազգային խորհրդակցական կամ համակարգող մարմնի ստեղծմանն ուղղված ջանքերը: Ուստի, գազի ոլորտում միասնական գնային քաղաքականության ձևավորումը, ինչն էլ փաստորեն այն է, ինչ Մերձկասպյան երկրներին առաջարկում է Ռուսաստանը «եվրոպական գների» հետ կապված, կարող է Մոսկվայի համար ևս մեկ քայլ հանդիսանալ այդ ուղղությամբ:

Թե որքանով կհաջողվի այդ քաղաքականությունը, կախված է, առաջին հերթին, Իրանի շուրջ ռազմաքաղաքական իրավիճակից, երկրորդ՝ Ղազախստան-Թուրքմենստան-Ուզբեկստան եռանկյունու միջպետական հարաբերություններից, և երրորդ՝ Ռուսաստանի հետ նրանց հարաբերություններից:

[1] Տարեկան բավական մեծ ծավալի գազ՝ 10 մլրդ մ^3, արտահանելով՝ Ուզբեկստանը, այնուամենայնիվ, հնարավորություն չունի ակտիվ դերակատար դառնալու անմիջականորեն Հարավային Կովկասի տարածաշրջանին առնչվող ծավալների վերաբաշխման և արտահանման ուղղությունների հարցերում:

«ՍԵՎԾՈՎՅԱՆ ՍԻՆԵՐԳԻԱ» ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ

Միխայիլ Աղաջանյան

Սևծովյան-կովկասյան տարածաշրջանը վերջին ժամանակներս ավելի շատ է գրավում խոշոր միջազգային դերակատարների ուշադրությունը: Աշխարհագրությամբ տարածաշրջանը գտնվում է Եվրոպայի և Ասիայի միակցման տեղում և այն տարածքի գլխավոր մասերից է, որն աշխարհաքաղաքական բառապաշարում հայտնի է «Եվրասիա» անունով:

Տարածաշրջանի մեծ մասը՝ նրա սևծովյան հատվածը, գտնվում է երկու խոշոր տարածաշրջանային դերակատարների՝ Ռուսաստանի և Թուրքիայի անմիջական, ինչպես նաև Եվրամիության՝ տարածաշրջանին հարակից խոշոր աշխարհամասային երկրների ազդեցության ներքո: Տարածաշրջանում ռազմավարական հետաքրքրություններ ունի նաև ԱՄՆ-ը: Եթե վերոնշյալ առաջին երկու դերակատարների (որոնք ուղղակի ելք ունեն դեպի Սև ծով, ինչպես նաև Հարավային Կովկասի հետ հարևանության անմիջական ու ամենաերկար գիծը) շահերը հիմնականում կենտրոնանում են Սև ծովում և Հարավային Կովկասում իրենց հատուկ դիրքերի պահպանման վրա, ապա ԵՄ-ը և ԱՄՆ-ը գործում են որպես այնպիսի ուժեր, որոնք փորձում են թափանցել այդ տարածաշրջանների քաղաքական և տնտեսական տարածք:

Ռուսաստանը և Թուրքիան ավելի շատ ձգտում են հանդես գալ որպես «ամուր» ուժ, այսինքն՝ ուժ ռազմաքաղաքական ներուժի ավելի մեծ օգտագործմամբ:

Այս տարածաշրջանում ԵՄ-ը, որպես եվրոպական վերազգային կառույց, հետևողական քաղաքականություն չունի: Այն, ինչ փորձում է իրականացնել ԵՄ-ը այնպիսի ծրագրերի ընդունմամբ, ինչպես, օրինակ, «Սևծովյան սիներգիան» է կամ «Արևելյան գործընկերությունը», ԵՄ առանձին անդամ երկրների (Գերմանիա, Լեհաստան, Ռումինիա) շահերի կենտրոնացված արտահայտությունն է: Նշված ծրագրերը կոշտ կախման մեջ են գտնվում այդ երկրների նախաձեռնողականությունից, հավակնոտությունից և գործողությունների հետևողականությունից:

ԱՄՆ-ը տրամադրված է տարածաշրջանում գործել գերազանց ռազմաքաղաքական դիրքերից, քանի որ կարծում է, թե մի կողմից՝ «փափուկ ուժի» կիրառմամբ տարածաշրջանում ազդեցության գոտու «բացն» արդեն զբաղեց-

ված է եվրոպացիների կողմից, իսկ մյուս կողմից՝ կարծում է, թե տարածաշրջանը խիստ ռազմականացված է և ծանրաբեռնված առաջին հերթին տարածքային բնույթի չլուծված միջպետական խնդիրներով: Դա հնարավորություն է տալիս ԱՄՆ-ին ռազմաքաղաքական դիրք զբաղեցնել տարածաշրջանում տեղային ռազմական ներկայության ստեղծման միջոցով, թեև առայժմ չի հաջողվում այդ ներկայությունն ապահովել Սև ծովի ողջ պարագծով՝ դեպի Հարավային Կովկաս ուղղակի և երկարատև ելքով:

Հայաստանի համար Սևծովյան-կովկասյան տարածաշրջանում ներգրավվելու և գործելու եվրոպական պրակտիկան հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ նկատառումներով.

1. Թեև տարածաշրջանում ազդեցության անմիջական լծակները գտնվում են Ռուսաստանի և Թուրքիայի, մասամբ ԱՄՆ ձեռքում, այնպիսի երկրներ, ինչպիսիք են Գերմանիան, Լեհաստանը, Ռումինիան, փորձում են գտնել տարածաշրջանում իրենց քաղաքական գծի տարբերակիչ նրբությունները, ինչը լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում այստեղ ուժերի հավասարակշռությունը պահպանելու և տարածաշրջանային նախագծերին Հայաստանի մասնակցության համար:
2. Որքան խոշոր է դերակատարը, այնքան ավելի «խոշորացված» է նրա մոտեցումը Սևծովյան-կովկասյան տարածաշրջանին. տարածաշրջանի աշխարհաքաղաքական արժեքավորությունը ԱՄՆ-ը դիտարկում է գերազանցապես համատարածաշրջանային ասպեկտով, այլ ոչ թե տարածաշրջանի կոնկրետ երկրների հանդեպ տարբերակված մոտեցման համատեքստում: Իսկ եվրոպական երկրներն ավելի շատ փորձում են տարածաշրջանին մոտենալ տարբերակված դիրքերից, ինչն իր արտահայտությունն է գտել «Արևելյան գործընկերություն» ծրագրի (2008թ.) դրույթներում, այն դեպքում, երբ 2007թ. ընդունված «Սևծովյան սիներգիա» ծրագրում կիրառված է համատարածաշրջանային մոտեցումը: Տարածաշրջանի երկրների հետ ԵՄ հարաբերությունների տարբերակումն ի հայտ է եկել նաև Եվրոպական հարևանության քաղաքականությունում (*European Neighbourhood Policy*) և դրա հիման վրա ընդունված Գործողությունների պլանում (*Action Plans*)՝ առանձին վերցրած յուրաքանչյուր երկրի համար:
3. ԵՄ և նրա առանձին անդամ երկրների շահի գնահատականը՝ գերազանցապես էներգետիկ դիրքերից, մակերեսային է: ԵՄ-ում լավ գիտակցում են, որ եվրոպական ազդեցության ուժեղացումը, հատկապես Հարավային Կովկասում, լիարժեք և երկարատև չի լինի, եթե հետապնդվող նպատակներն ամբողջությամբ կենտրոնացվեն Ադրբեջանի (որպես «էներգակրի») և Վրաստանի (որպես «էներգատարանցողի») շուրջ: Էներ-

գետիկ ռեսուրսներ չունենալով և ներգրավված չլինելով ներկա տրանսպորտային երթուղիներում՝ Հայաստանը տիրապետում է ռազմաքաղաքական ռեսուրսների և դրսևորում է իր ազդեցությունը, ինչն անհրաժեշտ է տարածաշրջանում ուժերի հաշվեկշռի պահպանման համար: Հայաստանի ներգրավվածությունը ԵՄ արտաքին քաղաքական օրակարգում և իր սեփական արտաքին քաղաքական գծի հարաբերակցությունը ԵՄ արտաքին քաղաքականության հետ գնահատական է ստանում Բրյուսելի պաշտոնական կառույցներում: Այսպես, Եվրահանձնաժողովը նշում է, որ Հայաստանը լայնորեն կապակցվում է ԵՄ Ընդհանուր արտաքին քաղաքականության և անվտանգության քաղաքականության հետ (հռչակագրերի ավելի քան 80%-ի գծով) և ընդհանուր առմամբ ակտիվ է ԵՄ-ի հետ արտաքին քաղաքականության և անվտանգության քաղաքականության խնդիրների շուրջ համագործակցությունում[1]:

Անցած տարվա օգոստոսից հետո ծավալված իրադարձությունների զարգացումը ցույց տվեց, որ ԵՄ-ը փորձում է ֆիզիկական ներկայություն հաստատել տարածաշրջանում, որը ներկա փուլում ներկայացված է Վրաստանում դիտորդական առաքելությամբ: «Սառեցված» հակամարտություններն այլևս չեն դիտարկվում որպես կետեր, որոնց վերահսկողությունը պետք է իրականացվի «կողքից». տարածաշրջանում սեփական քաղաքականության արդյունավետության համար, լինի էներգետիկա, թե տնտեսության մեկ այլ ուղղություն, անհրաժեշտ է ֆիզիկական ներկայություն տարածաշրջանում: Իսկ նման ներկայության ապահովումը չի կարող իրականանալ առանց տարածաշրջանի երկրների հետ հարթ և միաժամանակ տարբերակված հարաբերությունների, ընդհուպ մինչև նոր ինքնիշխան պետական կազմավորումների ճանաչման համարձակ քայլերին պատրաստ լինելը:

ԵՄ «Սևծովյան սիներգիա» ծրագրի նշանակությունն այն ուղղություններով, որոնք շոշափում են Հայաստանի շահերը և որոնք վերաբերում են Հարավային Կովկասի էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորմանը, կարելի է ներկայացնել հետևյալ կերպ:

Պատրաստվելով Եվրամիության ընդլայնմանը[2]՝ Եվրահանձնաժողովը նախապես, դեռ 2006թ. դեկտեմբերին, իր «Հարևանության եվրոպական քաղա-

[1] European Neighbourhood Policy – Armenia, MEMO/09/182. Brussels. 23 April 2009.

[2] 2008թ. փետրվարին, 2007թ. հունվարի 1-ին ԵՄ Բուլղարիայի և Ռումինիայի մուտքից մեկ տարի հետո, Կիևում, «Սևծովյան սիներգիա» ծրագրի անդամ երկրների արտգործնախարարների առաջին խորհրդակցությունում, Եվրահանձնաժողովի արտաքին կապերի և հարևանության եվրոպական քաղաքականության գծով հանձնակատար Բ.Ֆերերո-Վալդները հայտարարեց. «Այն բանից հետո, երբ մեկ տարի առաջ Բուլղարիան և Ռումինիան միացան ԵՄ-ին, վերջինն այլևս արտաքին խաղացող չէ այս տարածաշրջանում: Այժմ այն տարածաշրջանի անբաժանելի մասն է»:

քականության ամրապնդման մասին» փաստաթղթով Սևծովյան տարածաշրջանը հայտարարել էր խորացված տարածաշրջանային համագործակցության տարածք, որտեղ «Մոլդովան, Ուկրաինան և Հարավային Կովկասի երկրները միանում են Եվրամիության և Ռուսաստանի ու Թուրքիայի հետ»[1]:

ԵՄ գործունեության նշանակությունը Սևծովյան տարածաշրջանում նշվում է ԵՄ նախագահության «Հարևանության եվրոպական քաղաքականության ամրապնդումը» հաշվետու զեկուցման մեջ (2007թ. հունիս). «Սև ծովի տարածքը ԵՄ-ի համար հսկայական ռազմավարական նշանակության հարևան տարածաշրջան է, որտեղ տեղի ունեցող իրադարձություններն ուղղակի արձագանք են գտնում ԵՄ-ում: Եկել է Սևծովյան տարածաշրջանում ԵՄ ուժեղացված, համաձայնեցված և հավելյալ մասնակցության պահը, հատկապես Հարևանության խորացված եվրոպական քաղաքականության շրջանակներում»[2]:

2007թ. ապրիլին Եվրահանձնաժողովն ընդունեց ԵՄ քաղաքականությունը Սևծովյան տարածաշրջանում՝ հրապարակելով «Սև ծովի սիներգիան՝ տարածաշրջանային համագործակցության նոր նախաձեռնություն» անվանված փաստաթուղթը:

Սև ծովի տարածաշրջանի երկրների շարքում դեպի այդ ծով ելք չունեցող երկրները ներգրավելը Եվրահանձնաժողովը հիմնավորում է հետևյալ կերպ. «Թեև Ադրբեջանը, Հայաստանը, Հունաստանը և Մոլդովան ծովափնյա պետություններ չեն, պատմությունը, աշխարհագրական մերձավորությունը և սերտ կապերը նրանց դարձնում են բնական տարածաշրջանային դերակատարներ»[3]:

«Սևծովյան սիներգիա» ծրագրի իրականացմամբ շահագրգիռ ԵՄ երկրներում տարբեր դիրքորոշումներ կան՝ կապված ծրագրում այնպիսի երկրների դերի հետ, ինչպիսին, օրինակ, Ռուսաստանն է: Մասնավորապես, Լեհաստանի կարծիքով՝ Ռուսաստանն այս ծրագրում չպետք է գլխավոր դեր խաղա, իսկ Ռումինիայի կարծիքով՝ այն պետք է դառնա հավասար գործընկեր: Հայտնի է նաև, որ Լեհաստանը ձգտում է ծրագրում ներգրավել նաև Բելառուսը[4]:

«Սևծովյան սիներգիա» ծրագրի ստեղծման դրդապատճառներից է այն պնդումը, թե ժամանակն է, որ ԵՄ-ն ավելի մեծ մասնակցություն ունենա «տարածաշրջանային մակարդակով համագործակցության գերակայությունների և

[1] Communication On Strengthening the European Neighbourhood Policy, COM (2006)726 final. 04.12.2006.

[2] Strengthening the European Neighbourhood Policy - Presidency Progress Report, European Council. 10874/07. 21-22.06.2007.

[3] Black Sea Synergy – A New Regional Cooperation Initiative, COM (2007) 160 final. Brussels, 11.04.2007.

[4] *Ирина Пашковская,* Европейский Союз: энергетическая политика в отношении новых независимых государств // «Аналитические доклады» (Институт международных исследований МГИМО (У) МИД России), Выпуск 1 (22), Июль 2009, с. 14.

մեխանիզմների որոշման մեջ»[1]:

Ծրագրի գործողության հիմնական սկզբունքը, որը ձևակերպվեց 2007թ. հունիսին, «ճկուն երկրաչափությունն» է. «Սևծովյան տարածաշրջանային համագործակցության առաջընթացի համար միշտ չէ, որ պահանջվում է սևծովյան բոլոր պետությունների մասնակցությունը կամ, հակառակը, այն կարող է շահել հարևան տարածաշրջանների, ինչպիսին է Դունայի տարածաշրջանը, նախաձեռնությունների հետ սերտ համագործակցությունից»[2]:

ԵՄ փաստաթղթերի որոշ ձևակերպումներում նշվում է այն մասին, որ «Սևծովյան սիներգիա» ծրագիրը նպաստում է «սառեցված» հակամարտությունների կարգավորմանը: Դրանք բարձր հակամարտածին տարածաշրջաններում ԵՄ-ի կողմից «փափուկ ուժի» կիրառման մտադրություն են պարունակում: Այսպես, օրինակ, նշվում է, որ «Սևծովյան սիներգիան ԵՄ նախաձեռնությունն է և գործիք Սևծովյան տարածաշրջանում համագործակցության զարգացման համար՝ ուղղված դեմոկրատական և տնտեսական բարեփոխումների խթանմանը և տարածաշրջանում հակամարտությունների լուծմանն օժանդակելուն[3], կամ՝ «Սևծովյան սիներգիան նպատակ ունի հարաբերակցել տարածաշրջանային զարգացումը Վրաստանի, Մոլդովայի, Հայաստանի ու Ադրբեջանի միջև «սառեցված» հակամարտությունների լուծման հետ»[4]:

«Սառեցված» հակամարտությունների մասին ծրագրի տեքստում ձևակերպում կա այն մասին, որ «հատուկ ուշադրություն կհատկացվի տարածաշրջանում վստահության ամրապնդմանն օժանդակելուն՝ ներառյալ հատկապես բաժանված մասերը միացնելուն ուղղված համագործակցության ծրագրերը»:

Այս ձևակերպումը բավական արհեստական և գործնականում անիրականանալի բնույթ է կրում: Մի կողմից՝ «բաժանված մասերը միացնել» ասելով ավելի շուտ հարկ է հասկանալ «առանձնացած տարածքների «վերադարձ» նախկին «մետրոպոլիաներին», մյուս կողմից՝ ԵՄ կառույցները հակամարտության կողմերի միջև գործնականում վստահության և համագործակցության միջոցների հետևողական սխեմա չեն մշակել՝ «միացման» հռչակված նպատակի իրականացման պայմաններ ստեղծելու համար:

«Սևծովյան սիներգիա» ծրագրի ինստիտուցիոնալ-կազմակերպչական համակարգն ընդհանուր առմամբ հստակ գծեր չունի: Ծրագիրն ընդունելիս որոշվել էր, որ դրա շրջանակներում ԵՄ-ը չի ձևավորի առանձին ինստիտուցիոնալ կառույց, քանի որ Եվրահանձնաժողովը ծրագրում է օգտագործել սևծովյան տարածաշրջանի այլ կազմակերպությունների, մասնավորապես, Սև-

[1] Black Sea Synergy – A New Regional Cooperation Initiative. COM (2007) 160 final. Brussels, 11.04.2007.

[2] Strengthening the European Neighbourhood Policy - Presidency Progress Report, European Council. 10874/07. 21-22.06.2007.

[3] *Leigh Phillips*. This Week in the European Union. http://euobserver.com. 08.02.2008.

[4] *Fabrizio Tassinari*. Sailing the Black Sea at Last. http://euobserver.com. 07.02.2008.

ծովյան տնտեսական համագործակցության (ՍԾՏՀ) կազմակերպության մարմինները, որը զարգացած ինստիտուցիոնալ կառուցվածք ունի:

Բ.Ֆերերո-Վալդները Եվրահանձնաժողովի դիրքորոշումն այս հարցում պարզաբանեց 2008թ. փետրվարին. «Մենք անիվ չենք հայտնագործի. չենք ուզում կրկնել այն, ինչ ուրիշներն արդեն անում են: Մենք նաև չենք ուզում մրցակցել գործող նախաձեռնությունների հետ: Ուստի, մեր ուշադրությունը սևեռված է սևծովյան տարածաշրջանային կազմակերպությունների, մասնավորապես, Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության վրա՝ իր անդամների ընդլայնվածությամբ և տարածաշրջանում ունեցած ուրույն դերով: Մեր նպատակը ոչ թե նոր ինստիտուտներ ստեղծելն է, այլ ավելի շուտ՝ սերտ կապեր հաստատելը նրանց հետ, ովքեր արդեն աշխատում են այս բնագավառում, և տեսնելը, թե ուրիշ էլի ինչ կարող ենք ավելացնել այստեղ եղածին»[1]:

Որպես արդեն գոյություն ունեցող կազմակերպական կառույց Եվրահանձնաժողովը ծրագրում է նաև օգտագործել Սևծովյան ֆորումը՝ երկխոսության և գործընկերության համար[2]:

ԵՄ որոշ պատասխանատու պաշտոնյաների հայտարարություններում, որոնք անիջականորեն վերահսկում են Սևծովյան-կովկասյան տարածաշրջանն ընդհանրապես և «թեժ կետերը»՝ մասնավորապես[3], ԵՄ ներգրավվածությունը հակամարտությունների կարգավորման գործում ներկայացվում է որպես կայացած փաստ, ընդ որում՝ այդօրինակ ներգրավվածությունը նրանք բնութագրում են որպես «ուղղակի»: Այսպես, Բ.Ֆերերո-Վալդները, ելույթ ունենալով «Կասպյան հայացք 2008» Ռազմավարական ֆորումում (Բլեդ, Սլովենիա, 2006թ. օգոստոս), հայտարարել է. «Մենք ուղղակիորեն ներգրավված

[1] *Benita Ferrero-Waldner*, Black Sea Synergy: the EU's approach to the Black Sea region, Black Sea Synergy Ministerial Meeting. Kiev. 14 February 2008.

[2] Երկխոսության և գործընկերության ֆորումի համատեղ հռչակագրում (2006թ. հունիսի 5) մասնակից երկրները պայմանավորվել էին, որ ֆորումը մշտապես գործող կառույցներ կամ մարմիններ չի ունենալու, և այն չի կրկնելու Սևծովյան տարածաշրջանի համագործակցության առկա մեխանիզմների գործունեությունը: Ֆորումի շրջանակներում փոխգործակցությունը տեղի կունենա միջպետական շփումների, հրապարակային և մասնավոր գործընկերության, միջպետական նախագծերի և միջդիսցիպլինար ակադեմիական հետազոտությունների ձևով: Հռչակագիրը նախատեսում էր համագործակցություն ԵՄ ինստիտուտների հետ ֆորումում քննարկվող առաջարկների իրականացման հարցում:

[3] 2008թ. փետրվարին Կիևում, «Սևծովյան սիներգիա» ծրագրի մասնակից երկրների արտգործնախարարների խորհրդակցության նախօրեին, Բ.Ֆերերո-Վալդները հայտարարել է. «Անձամբ ես պատասխանատու եմ «Սևծովյան սիներգիայի» ողջ պոտենցիալի հետազոտման համար և համոզված եմ, որ այդ նոր գործընթացը կարող է նաև թեթևացնել այս տարածաշրջանի «սառեցված» հակամարտությունների համատեղ լուծման ճանապարհը»: (http://europa.eu/rapid/pressReleasesAction. 13.02.2008).

ենք Աբխազիայի, Լեռնային Ղարաբաղի և Հարավային Օսիայի հակամարտությունների լուծման մեջ»[1]:

Բ.Ֆերերո-Վալդները հայտարարությունն արել է մինչև «Սևծովյան սիներգիա» ծրագրի ընդունումը: Դրանում ասվում է, որ «Առաջավոր տարածաշրջանային համագործակցությունը նախատեսված չէ տարածաշրջանի հին հակամարտություններն ուղղակիորեն լուծելու համար, բայց այն կարող էր ավելի մեծ փոխադարձ վստահություն ստեղծել, և ժամանակի ընթացքում կարող էր օգնել վերացնելու որոշ պատնեշներ, որոնք կանգնած են դրանց լուծման ճանապարհին»: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ԵՄ-ը 2007թ. և հատկապես 2008թ. օգոստոսից հետո փոքր-ինչ իջեցրել է իր քաղաքական պահանջների նշաձողը՝ վճռելով ամրագրվել «ուղղակի ներգրավման» և «առաջավոր տարածաշրջանային համագործակցության» սկզբունքների միջին դիրքում: Որպես միջին դիրք հանդես է գալիս ֆիզիկական ներկայության սկզբունքը հակամարտություններ ունեցող տարածաշրջաններում, ինչը ներկա փուլում, անցած տարվա օգոստոսից հետո, դրսևորվում է ԵՄ դիտորդական առաքելությամբ Վրաստանում: Ֆիզիկական ներկայություն ասելով հասկացվում է իրավիճակի մոնիթորինգը հակամարտությունների գոտիներում: Ի դեպ, այս մասին ուղղակիորեն ասվում է «Սևծովյան սիներգիա» ծրագրի տեքստում. «ԵՄ-ը նաև պետք է ուղիներ փնտրի մոնիթորինգի անցկացման մեջ իր մասնակցությունն ուժեղացնելու համար»:

Ղարաբաղյան հակամարտության գոտում եվրոպական ներկայության հնարավորության մասին ԵՄ պաշտոնյաներն ընդգծել են դեռ 2006թ., Հարավային Օսիայի և Վրաստանի սահմանին ԵՄ դիտորդական առաքելության տեղակայումից ավելի քան երկու տարի առաջ: Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Հ.Տալվիտեն (ԵՄ հատուկ ներկայացուցիչն էր 2003թ. հուլիսից մինչև 2006թ. փետրվարը) 2006թ. փետրվարին հայտարարել է. «Եվրոպան խաղաղարարներ և «օրհնանքի արարողություն («*blessing ceremony*») է խոստացել Լեռնային Ղարաբաղի համար, եթե Հայաստանը և Ադրբեջանը կարողանան պայմանավորվել»[2]: Ի՞նչ նկատի ուներ «օրհնանքի արարողություն» ասելով՝ հետագայում չի պարզաբանվել, սակայն կարելի է ենթադրել, որ դե ֆակտո Լեռնային Ղարաբաղի պետականության պահպանում անորոշ երկար ժամանակով, Դաշտավայրային Ղարաբաղի տարածքներում խաղաղարար առաքելության տեղակայումից հետո:

Հետաքրքիր են եվրոպական փորձագետների գնահատականները, որոնց կարծիքը հաշվի են առնում ԵՄ քաղաքական որոշումներ կայացնող կենտ-

[1] *Benita Ferrero-Waldner*, Political reform and sustainable development in the South Caucasus: the EU's approach, «Caspian Outlook 2008» Bled Strategic Forum. Slovenia. 28 August 2006.

[2] *Andrew Rettman*, Kosovo issue inflaming separatism in EU neighbours. http://euobserver.com. 24.02.2006.

րոններում: Հարավօսական հակամարտության գոտում անցյալ տարվա սրացումից գրեթե անմիջապես հետո Եվրախորհրդի արտաքին հարաբերությունների գծով փորձագետները (*European Council on Foreign Relations)* հրապարակեցին «Կարո՞ղ է արդյոք ԵՄ-ը խաղաղություն շահել Վրաստանում» զեկույցը[1]: Զեկույցի հեղինակներն առաջարկում էին, մասնավորապես, հետևյալ հանձնարարականները, որպեսզի ԵՄ-ի համար առավելագույն շահավետությամբ օգտագործվեն իրադարձությունները Հարավային Օսիայի շուրջ. «Քանի որ ԵՄ-ը գլխավոր միջնորդն է Մոսկվայի և Թբիլիսիի միջև, եվրոպական առաջնորդները իրադարձությունների զարգացման վրա ազդելու նոր հնարավորություն են ստացել: Եթե նրանք օգտվեն դրանից, ԵՄ-ը կարող է «խաղաղություն շահել»՝ չփորձելով վերականգնել հին ու անկայուն *status-quo-ն* Վրաստանում կամ պատժելով Ռուսաստանին, այլ փոխելով խաղի կանոնները հետխորհրդային ողջ տարածքում... Ռուսաստանի հանդեպ կարճաժամկետ պատժամիջոցներ կիրառելու վրա կենտրոնանալու փոխարեն ԵՄ-ը պետք է արագ գործի, որպեսզի բարձրացնի հեղինակությունը Արևելյան հարևանության տարածաշրջանում և օգնի կայունացնելու մյուս հակամարտային տարածաշրջանները՝ ուշադրություն դարձնելով ինչպես հին՝ «սառեցված» հակամարտություններին, այնպես էլ հնարավոր թեժ կետերին»:

[1] *Nicu Popescu*, *Mark Leonard* and *Andrew Wilson*, Can the EU Win the Peace in Georgia? European Council on Foreign Relations Policy Brief. 25.08.2008.

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԱՐՏԵԶՅԱՆ ԱՎԱԶԱՆԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Նվեր Մելիքյան

Սակավաջուր երկրներում, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում, որտեղ բացակայում են ջրային ռեսուրսների ավելացման այլ աղբյուրներ, դրանց առկա պաշարների խնայողական և նպատակային օգտագործումը դարձել է հրամայական պահանջ: Ստորերկրյա ջրերի արդյունավետ և կանոնակարգված օգտագործումն այդ հիմնախնդիրների առանձին կարևոր մասն է:

Ստորերկրյա ջրերի օգտագործման բնագավառը և չափերը սահմանելիս պետք է ելնել հետևյալ երեք փոխկապակցված տեսակետներից.

1. ստորերկրյա ջրերը ռազմավարական նշանակության օգտակար հանածո են,
2. ստորերկրյա ջրերն ընդհանուր ջրային ռեսուրսների կարևորագույն մասն են,
3. ստորերկրյա ջրերը բնական միջավայրի առանձին գործոն են:

ՀՀ-ում ստորերկրյա ջրերի հիմնական պաշարները գտնվում են Արարատյան հարթավայրում: Պաշարների վերաբերյալ դեռևս վերջնականապես ճշգրտված տվյալներ չկան: 1966թ. ջրաերկրաբանական հաշվարկներով ստացվել է 107,32 մ^3/վ ելք, 1975թ.՝ 30,12-64,1 մ^3/վ: Պաշարների պետական հանձնաժողովը 1984թ. դրանց քանակը սահմանել է 90,27 մ^3/վ, որից մինչև 1,0 գ/լ հանքայնացում (քաղցրահամ ջրեր) ունեցող ստորերկրյա ջրերի առանձնամասը կազմում է 64,28 մ^3/վ: Բնության պահպանության և ընդերքի նախարարությունը որոշել է, որ Արարատյան արտեզյան ավազանի ճնշումային երկու ջրատար հորիզոնների ջրային պաշարները կազմում են 35,8 մ^3/վ:

Արտեզյան ավազանի բարձր ճնշումային հորիզոնի ջրերն օգտագործվում են Երևան, Արտաշատ, Էջմիածին, Արարատ, Վեդի, Արմավիր քաղաքների և մի քանի տասնյակ համայնքների, նաև տեխնիկական ջրամատակարարման, ձկնաբուծության, ոռոգման և այլ բնագավառներում: 20-րդ դարի երկրորդ կեսին, Սևանի հիմնախնդրի լուծման հետ կապված, ստորերկրյա ջրերի օգտագործումն ավելի մեծ ծավալ ստացավ:

1973-75թթ. Երևանի ջրամատակարարման առաջին հերթի 1,5 մ^3/վ ծախսով ջրատարի համար ավազանի Ռանչպարի տեղամասի բարձր ճնշումային

հորիզոնում տեղադրվեցին յոթ շատրվանող հորատանցքեր՝ 2,72 մ³/վ նախնական գումարային ելքով: Նույն նախագծային ծախսով երկրորդ հերթի ջրամատակարարման համար հիշյալ տեղամասում երկու տարի հետո տեղադրվեց ևս յոթ շատրվանող հորատանցք 3,62 մ³/վ նախնական գումարային ելքով:

Համաձայն մեր ուսումնասիրությունների՝ առաջին հերթի ջրատարի յոթ հորատանցքերի գումարային ելքը 1991թ. 0,6 մ³/վ էր (անկումը՝ 1,35 մ³/վ կամ 50%), իսկ երկրորդ հերթի ջրատարի հորատանցքերինը՝ 1,35 մ³/վ (անկումը՝ 2,27 մ³/վ կամ 63 %): Ելքերի անկման տպավորիչ օրինակ է առաջին հերթի ջրատարի № 487 շատրվանող հորատանցքը, որի ելքը 800 լ/վ նախնական արժեքից 14 տարի հետո դարձել էր 100 լ/վ, իսկ երկրորդ հերթի ջրատարի № 504 հորատանցքի ելքը 765 լ/վ-ից նույնքան ժամանակ հետո պակասելով դարձել էր 220 լ/վ:

Նշեմ, որ փոխազդեցությունների նման աղետալի հետևանքները հնարավոր կլիներ կանխատեսել և կանխել, եթե շատրվանող հորատանցքերն ապահովված լինեին համապատասխան ջրաերկրաբանական հաշվարկային նախագծերով:

Ժամանակին տարբեր կարիքների համար ավազանում տեղադրվում էին նոր հորատանցքեր և 1981թ. այստեղ արդեն գործում էին 741 խորքային հորատանցքեր 22,1 մ³/վ ընդհանուր ելքով և 698 շատրվանող հորատանցքեր 25,79 մ³/վ գումարային ելքով:

Երևան քաղաքի ջրամատակարարումը բավարարելու նպատակով 1981-85թթ. ավազանի ճնշումային հորիզոնի Գայ-Հայկաշեն տեղամասում երրորդ հերթի ջրատարի համար տեղադրվեցին 19 շատրվանող հորատանցքեր 3,35 մ³/վ նախնական գումարային ելքով, իսկ չորրորդ հերթի ջրատարի համար՝ 20 շատրվանող հորատանցքեր՝ 2,69 մ³/վ ելքով:

Համաձայն «Ուայդ Գեյթ» ՍՊԸ-ի 2005թ. կատարած գույքագրման արդյունքների՝ երրորդ հերթի ջրատարի հորատանցքերի գումարային ելքն այդ տարում կազմել է 2,72 մ³/վ (անկումը 0,63 մ³/վ կամ 19%), իսկ չորրորդ հերթի ջրատարի հորատանցքերինը՝ 2,15 մ³/վ (անկումը 0,54 մ³/վ կամ 20%): Նշենք, որ այստեղ ելքերի նվազման չափերը ստացվել են կասկածելիորեն շատ փոքր, և ելքերի բերված արժեքները վստահություն չեն ներշնչում:

Խորհրդային ժամանակաշրջանի վերջին տարիներին արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի օգտագործումը ստացել էր մեծ ծավալներ և դրանք արդեն հասնում էին թույլատրելի սահմանին: Այսպես, 1990թ. ավազանում արդեն գործում էին խորքային պոմպերով գործող հորատանցքեր 32,85 մ/վ ընդհանուր ելքով և 916 շատրվանող հորատանցքեր 20,79 մ³/վ գումարային ելքով: Այսպիսով, ուղղաձիգ հորատանցքերով կատարվող գումարային ջրառը երկու ճնշումային հորիզոններից կազմում էր 53,64 մ³/վ, և եթե դրան ավելացնենք նաև գետնաջրերի հորիզոնից ցամաքուրդային համակարգերով հեռացվող շուրջ 35 մ³/վ ելքը, ապա ստացված 88,64 մ³/վ գումարային ջրառն իրակա-

նում արդեն գերազանցում է ավազանի ստորերկրյա ջրերի բնական պաշարներին՝ բացասական մի շարք հետևանքներով հանդերձ:

Հանրապետության անկախության առաջին տարիներին, էներգետիկ ճգնաժամի պայմաններում, կտրուկ պակասեց խորքային պոմպերով գործող հորատանցքերի քանակը, 1996թ. դրանց քանակն ընդամենը 292 էր 10,18 մ³/վ գումարային ելքով:

Սակայն էներգետիկ ճգնաժամը չխանգարեց որոշ ձեռներեցների, որ արտեզյան ավազանում սկսեն մեծ թափ տալ ձկնաբուծական լճակների կառուցմանը՝ տեղադրելով բարձր ճնշումային հորիզոնում բազմաթիվ նոր շատրվանող հորատանցքեր: 1990-96թթ. ավազանում հորատվել էր 33 նոր շատրվանող հորատանցք՝ ընդհանուր թիվը հասնելով 845-ի 19,94 մ³/վ գումարային ելքով՝ անխղճորեն աղքատացնելով այդ հորիզոնը:

Ավազանի բարձր ճնշումային հորիզոնի սխալ շահագործման մասին է վկայում մեկ այլ փաստ. 1996թ. հարթավայրում առկա էր տեխնիկապես անսարք, դուրս գրված և կոնսերվացված վիճակում գտնվող 728 հորատանցք, որոնցից 41-ը գործող շատրվանող հորատանցքեր էին, սակայն դրանց 985,5 լ/վ գումարային ելքը չէր օգտագործվում, այլ աննպատակ թափվում էր մոտակա ցամաքուրդային ցանց՝ դրանով էլ ավելի վատացնելով վերջիններիս աշխատանքի արդյունավետությունը:

Հետագա տարիներին, էներգետիկ ճգնաժամը հաղթահարելուց հետո, լայն ընդգրկում ստացավ ոռոգման նպատակով թույլ ճնշումային հորիզոնից ջրառման գործընթացը:

Այդ ժամանակահատվածում մեծ չափերի հասավ նաև ձկնաբուծական լճակների կառուցումը: Չնայած այդ հարցի վերաբերյալ ՀՀ կառավարության ընդունած մի շարք որոշումներին, որոշ անհատներ կարողանում էին տարբեր տեսակի զարտուղի ճանապարհներով ավազանի բարձր ճնշումային հորիզոնում նշված լճակների համար նորանոր շատվանող հորատանցքեր տեղադրել՝ շահագործելով դրանք իրականում անվերահսկելի և չկարգավորված ձևով:

Մասնավորապես, Երևանի ջրամատակարարման Գայ-Հայկաշեն հանքավայրում, շրջանցելով կառավարական խիստ արգելքները, 2005թ. վիճակով ձկնաբուծական լճակների համար տեղադրված էր 58 շատրվանող հորատանցք շուրջ 5,0 մ³/վ ելքով: Համաձայն Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտի գույքագրման աշխատանքների և տեղական ՋՕԸ տվյալների՝ 2006թ. հոկտեմբերի մեկի դրությամբ արտեզյան ավազանում առկա էին 940 խորքային հորատանցքեր 29,12 մ³/վ գումարային ելքով և 1089 շատրվանող հորատանցքեր 30,74 մ³/վ ընդհանուր ելքով: Ընդ որում՝ 224-ը 10,9 մ³/վ ծախսով ծառայում էին միայն ձկնաբուծական լճակներին՝ ավելի հյուծելով արտեզյան ավազանի բարձր ճնշումային հորիզոնը:

Այդ հորիզոնի անհեռատես և անտնտեսվար շահագործման մասին է վկայում այն փաստը, որ ՀՀ ջրային օրենսգրքի ընդունումից (հուլիս, 2002թ.) հետո մինչև 2008թ. վերջը ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրվել է 36,8 մ^3/վ ելքով ջրօգտագործման թույլտվություն, որից 20 մ^3/վ-ը նպատակաուղղված է եղել ձկնաբուծական լճակների շահագործմանը:

Արարատյան արտեզյան ավազանի չհամակարգված շահագործումը ներկայումս ևս շարունակվում է: Դրա օրինակն է այն, որ միայն 2007թ. Արարատի մարզում տեղադրվել է ևս 540 հորատանցք, իսկ Արմավիրի մարզում՝ 694:

Այսպիսով, ներկայումս Արարատյան արտեզյան ավազանում տեղադրված են մոտ 3263 ուղղաձիգ հորատանցքեր և դրանց գումարային ելքն արդեն գերազանցում է ավազան մտնող ջրի քանակությանը: Սա շատ մտահոգիչ փաստ է և պետք է դառնա քննարկման առաջնահերթ հիմնախնդիր:

Կարելի է փաստել, որ Արարատյան արտեզյան ավազանը զանգվածային և քաոսային ձևով, առանց համապատասխան ջրաերկրաբանական հաշվարկների և նախագծերի, ձկնաբուծական լճակների կառուցապատման հետևանքով ներկայումս գտնվում է էկոլոգիապես աղետալի վիճակում:

Ձկնաբուծական լճակների հետ կապված առկա են նաև բացասական այլ հանգամանքներ: Նախ, դրանց մեծ մասն ապահովված չէ շրջափակող ցամաքուրդներով, ինչը հարակից հողատարածքների գերխոնավացման, ճահճակալման և աղակալման տեղիք է տալիս, իսկ դրանց հետադարձ ջրերը հիմնականում լցվում են մոտակա ցամաքուրդա-կոլեկտորային ցանցեր՝ վտանգելով վերջիններիս աշխատանքի արդյունավետությունը: Երկրորդ հանգամանքն այն է, որ ժամանակի ընթացքում շատրվանող հորատանցքերի ելքերի շարունակական անկումը հետագայում առաջ է բերելու ձկնաբուծական լճակների համար նոր հորատանցքերի տեղադրման անհրաժեշտություն: Դա հատկապես վերաբերում է այն հորատանցքերին, որոնք շահագործվում են առանց փականային կարգավորման: Տվյալ տեղամասում նոր տեղադրված հորատանցքերն էլ իրենց հերթին կպակասեցնեն հների ելքերը և այդպես շարունակ: Ի վերջո, կգա այն պահը, երբ նոր շատրվանող հորատանցքի տեղադրումը տնտեսապես ուղղակի անիմաստ կլինի:

Ավելորդ չէ նշել, որ արտեզյան ավազանում արդի իրական պատկերն ավելի վատն է, քան արձանագրված են տարբեր հետազոտողների կողմից: Այդպիսի եզրակացությանը հիմք է տալիս նաև այն հանգամանքը, որ եղել են դեպքեր, երբ թույլտվությունը տրված է հին հորատանցքի վերականգնման համար, բայց փաստացի դրա փոխարեն տեղադրվում է նոր շատրվանող հորատանցք, որի ելքը հաճախ տասնյակ անգամ գերազանցում է այսպես կոչված «հին» հորատանցքերի ելքերը: Երբեմն ձկնաբուծական լճակների տերերը ճիշտ տվյալներ չեն տալիս շատրվանող հորատանցքերի ելքերի քանակի վե-

բաբերյալ, իսկ չափելու դեպքում արգելվում է մոտենալ դրանց: Նկատվել են նաև թաքնված ջրատարի զուգահեռ խողովակներ, ինչպես նաև թերություններ ջրի աղբյուրների գույքագրման աշխատանքներում և այլն:

Պիեզոմետրիկ ճնշումների, ինչպես նաև շատրվանող ելքերի նման անանախադեպ վտանգավոր անկումն անտարակույս արտեզյան ավազանում առկա մեծաքանակ շատրվանող հորատանցքերի ազդեցությունների և փոխազդեցությունների հետևանքն է, և այն ժամանակի ընթացքում հետզհետե ավելի խորանալու միտում ունի:

Փաստորեն, Արարատյան հարթավայրում արտեզյան ավազանում առաջացել է Սևանի հիմնախնդրի կարգի թնջուկ, որի լուծումը որոշ առումով ավելի բարդ է, հատկապես եթե ի նկատի ունենանք, որ որոշ ոչ պիտանի շատրվանող հորատանցքերի ամբողջովին վերացումը կապված է տեխնիկական մեծ դժվարությունների հետ:

Հետագա տարիներին արտեզյան ավազանում ստեղծվող իրավիճակը պարզելու համար անհրաժեշտ է անհապաղ մշակել ջրաերկրաբանական հաշվարկային հատուկ եղանակներ և դրանցով կանխատեսել հորատանցքերի ելքերի և պիեզոմետրիկ ճնշումների դաշտի դինամիկ փոփոխությունները:

Առաջարկություններ

Արարատյան հարթավայրի արտեզյան ավազանը վերջնական հյուծումից փրկելու, ստորերկրյա ջրերի օգտագործումը կարգավորելու, դրանց արդյունավետությունը բարձրացնելու, հորատանցքերի հորատումը կանոնակարգելու և հիմնականը՝ ապագա սերունդների խմելու ջրի պաշարները պահպանելու նպատակով անհրաժեշտ է.

1. Բացառել Երևանի ջրամատակարարման հանքավայրի Գայ-Հայկաշեն և Ռանչպարի տեղամասերում նոր շատրվանող հորատանցքերի տեղադրումը:
2. Ավազանում ջրօգտագործման թույլտվությունն իրականացնել՝ խստորեն հետևելով ՀՀ կառավարության որոշումներին և սահմանված կարգով:
3. Արգելել թույլատրված ջրառման իրականացումը խորքային պոմպերով գործող և շատրվանող հորատանցքերով, եթե դրանք ապահովված չեն համապատասխան նախագծերով և ջրաերկրաբանական ու հիդրոդինամիկ հաշվարկներով:
4. Ապահովել բոլոր շատրվանող հորատանցքերը ելքերի և ճնշումների դինամիկայի կանխատեսման համապատասխան հաշվարկներով և ջրօգտագործման նոր թույլտվություն տալ միայն այդ հաշվարկների հիման վրա:

5. Ձկնաբուծական լճակների համար որոշել կենսաբանական և էկոլոգիական օպտիմալ չափաբաժինը և դրա համաձայն էլ սահմանել դրանց սպասարկող շատրվանող հորատանցքերի աշխատանքային ռեժիմը:
6. Սահմանել բարձր ճնշումային հորիզոնում անհրաժեշտ դրական ճնշման նվազագույն չափը և շատրվանող նոր հորատանցքերի տեղադրումը թույլատրելիս առաջնորդվել դրանով:
7. Արտեզյան ավազանի շահագործման հետ կապված նախագծային, գույքագրման, հետազոտական և այլ բնույթի աշխատանքներն ընդունել և հաստատել միայն հրապարակային քննարկումներից հետո՝ դրանց մեջ ընդգրկելով հանրապետությունում այդ բնագավառի ոչկողմնակալ մասնագետներին:
8. Արարատյան արտեզյան ավազանի բարձր ճնշումային հորիզոնից ներկա մեծաքանակ ջրառումը սահմանափակելու նպատակով անհապաղ ստեղծել կառավարական հատուկ հանձնախումբ, որը համապատասխան տնտեսական և էկոլոգիական չափորոշիչներով կընտրի փակման ու ամբողջական վերացման ենթակա շատրվանող հորատանցքերը և կապահովի այդ միջոցառումների անվերապահ իրականացումը:
9. Անդրսահմանային ստորերկրյա ջրերի ռեժիմի փոփոխությունը բացահայտելու նպատակով Թուրքիայի սահմանի երկարությամբ մի քանի բնորոշ տեղերում տեղադրել դիտահորեր և կատարել դրանցում ջրի մակարդակների կանոնակարգված դիտումներ:

Աղբյուրներ և գրականություն

1. О результатах изысканий для обоснования генеральной схемы использования подземных вод Араратской равнины. Отчет ПНИИИС, Москва, 1974г.
2. Переоценка эксплуатационных запасов подземных вод Араратского артезианского бассейна АрмССР по состоянию на 09.83 г. Отчет АрмГУ, *Паносян С.Ф. и др.*, Ереван, 1983г.
3. *Մելիքյան Ն.Լ.,* Արտեզյան ավազանի ջրերի շահագործական պաշարների արդյունավետ օգտագործման և կառավարման մեթոդները: Դոկտորական ատենախոսություն, Երևան, 2006թ.:

WORLD BANK GROUP, INTERNATIONAL FINANCE CORPORATION. «ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ» ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾԸ 2007-2010ԹԹ[1].

Կարեն Վերանյան

Երկու խոսք կազմակերպության մասին

Միջազգային ֆինանսական կազմակերպությունը *(International Finance Corporation-ը) «World Bank Group»-ի* անդամ է և գտնվում է Վաշինգտոնում: Ֆինանսական ընկերությունը գործում է հիմնականում զարգացող երկրների ազատ և մրցունակ շուկայական հարաբերությունների խթանման, ընկերություններին ու մասնավոր սեկտորին աջակցման, աղքատության նվազեցման ուղղությամբ: Միջազգային ֆինանսական կազմակերպության անդամ է 179 երկիր, այդ թվում՝ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը (անդամակցել են միևնույն՝ 1995թ.):

«Գործարարության» նախագիծը

Միջազգային ֆինանսական կազմակերպությունը, ֆինանսական տարբեր գործառույթներից զատ, *World Bank Group-ի* շրջանակներում վարկանիշային հետազոտություններ է իրականացնում տվյալ երկրի գործարարության *(Doing business)* մթնոլորտի լուսաբանման նպատակով: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող այս վարկանիշային հետազոտություններն առաջին անգամ սկսել են իրականացվել 2004թ. ի վեր: Հաշվետվություններն իրականացվել են հիմնականում հետևյալ 10 ցուցիչների հիման վրա (նախորդ զեկույցներում, սակայն, կիրառված են ոչ բոլոր ցուցիչները).

1. գործարարության ձեռնարկում/ձեռնարկության հիմնում[2]
2. արտոնագրում

---

[1] Կազմակերպության տարեկան վարկանիշային հետազոտությունները հիմնված են նախորդ տարիների տվյալների վրա:

[2] Ցուցիչը ցույց է տալիս գործարարության պաշտոնական գրանցման համար անհրաժեշտ գործողությունների/միջոցառումների, տևողության, ծախսերի ու նվազագույն ներդրումների չափաքանակը:

3. աշխատուժի վարձակալում
4. սեփականության գրանցում
5. վարկավորում
6. ներդրողների պաշտպանվածություն
7. հարկերի վճարում
8. միջազգային առևտուր
9. պայմանագրերի իրագործում
10. գործարարության ավարտում/ձեռնարկության լուծարում:

Աղյուսակներում ներկայացվելու են ոչ միայն յուրաքանչյուր ցուցչին վերաբերող վարկանիշները, այլ նաև թվով 10 ցուցիչների ընդհանրացված վարկանիշը (ընդհանուր վարկանիշը կոչվում է «գործարարության հեշտ իրականացում», որը ցույց է տալիս տվյալ երկրի զբաղեցրած դիրքը): Որքան ցածր են տվյալ պետության ենթացուցիչների միավորները, այնքան բարձր է այդ երկրի գործարարության վարկանիշավորման սանդղակը:

Առաջին աղյուսակում ներկայացված վիճակագրությունից պարզ է դառնում, որ 2007թ. տվյալներով՝ Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում գործարարության իրականացման վարկանիշում առաջատար դիրք է զբաղեցնում (46)՝ զիջելով միայն Վրաստանին (36): Վրաստանի ու Հայաստանի ցուցանիշները, ի տարբերություն ԱՊՀ մնացած պետությունների, ընդհուպ մոտենում են մերձբալթյան երկրներին: Հայաստանը գերազանցում է Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրների, ինչպիսիք են Հունգարիան (51), Բուլղարիան (54), Ռումինիան (55), Հունաստանը (95):

Հայաստանին վարկանիշով զգալիորեն զիջում է Ադրբեջանը, որը զբաղեցնում է տվյալ աղյուսակի 97-րդ հորիզոնականը (աղյուսակի միջնամասում է): Նշենք նաև, որ գործարարության իրականացման 10 ցուցիչներից Հայաստանի պարագայում նվազագույն ցուցանիշը հարկերի վճարման ու միջազգային առևտրի ցուցիչներինն է՝ համապատասխանաբար 137 և 133: Իսկ լավագույն արդյունքներն արձանագրվել են սեփականության գրանցման (2)[1], ձեռնարկության լուծարման (43), գործարարության ձեռնարկման (44), ինչպես նաև աշխատուժի վարձակալության (48) ցուցիչներում: Հայաստանի պարագայում 10 ցուցիչները գերազանցում են Ադրբեջանի համապատասխան արդյունքներին, բացառությամբ երկու՝ վարկավորման և պայմանագրերի ձևակերպման ցուցիչների:

[1] Ընդ որում՝ սեփականության գրանցման՝ Հայաստանի ցուցիչն այդ թվականին համարվում է լավագույնը ԱՊՀ և մերձբալթյան երկրների շարքում:

Աղյուսակ 1

«Գործարարության» վարկանիշը 2007թ., ԱՊՀ և մերձբալթյան երկրներ[1]

Երկիր[2]	Դիրքը, ընդհ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ											
Վրաստան	35	39	27	11	36	12	19	14	2	29	21
Հայաստան	46	44	72	48	2	62	81	137	133	64	43
Ղազախստան	71	48	173	23	71	45	49	44	177	28	103
Ղրղզստան	88	45	150	75	7	62	32	153	176	31	131
Մոլդովա	90	87	157	87	45	94	96	119	118	17	78
Ադրբեջան	97	95	159	79	58	21	105	142	170	30	71
Ռուսաստան	112	45	172	102	44	156	81	126	155	19	81
Բելառուս	123	154	94	44	96	111	120	178	132	16	73
Ուկրաինա	139	105	174	103	134	62	141	177	116	46	139
Ուզբեկստան	145	73	143	68	167	170	105	162	163	48	113
Տաջիկստան	153	171	163	126	40	132	175	153	175	23	102
Մերձբալթյան երկրներ											
Լատվիա	20	25	86	92	83	12	49	38	22	3	62
Լիտվա	24	50	55	125	4	32	81	74	23	18	32
Էստոնիա	18	53	12	156	22	45	32	32	7	31	51

Աղբյուրը՝ http://www.doingbusiness.org/, http://russian.doingbusiness.org/CustomQuery/

Ինչպես պատկերված է *Աղյուսակ 2-ում,* Հայաստանին զիջում են նաև մյուս երկու հարևանները՝ Թուրքիան ու Իրանը: Ընդ որում, ի տարբերություն Թուրքիայի, որը զբաղեցնում է 65-րդ դիրքը և գերազանցում է Ադրբեջանին ու Ռուսաստանին, բավական ցածր վարկանիշ է գրանցվել Իրանի պարագայում (131): Հայաստանի վարկանիշը գերազանցում է Թուրքիային 4, զիջում՝ 5 ցուցիչներում. գործարարության ձեռնարկման, ներդրողների պաշտպանվածության, հարկերի վճարման, միջազգային առևտրի և պայմանագրերի ձևակերպման ցուցիչներում: 5-րդ՝ վարկավորման ցուցիչում արձանագրվել է հավասար՝ 62-ական միավոր:

Աղյուսակ 2

«Գործարարության» վարկանիշը 2007թ., Հայաստան և հարակից երկրներ

Երկիր	Դիրքը, ընդհ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
Վրաստան	35	39	27	11	36	12	19	14	2	29	21
Հայաստան	46	44	72	48	2	62	81	137	133	64	43
Թուրքիա	65	40	126	138	30	62	62	85	73	36	114
Ադրբեջան	97	95	159	79	58	21	105	142	170	30	71
Ռուսաստան	112	45	172	102	44	156	81	126	155	19	81
Իրան	131	66	158	143	141	62	158	94	129	54	110

[1] Զեկույցում ներառված է 175 երկիր:
[2] Թուրքմենստանը ներկայացված չէ:

«Գործարարություն» 2008թ. նախագիծը[1]

Ստորև ներկայացված «Գործարարության» նախագծի 2008թ. հաշվետվությունում Հայաստանն ԱՊՀ երկրների շարքում կրկին առաջատար դիրք է զբաղեցնում՝ զիջելով միայն Վրաստանին: Նախորդ նախագծի համեմատ 2008թ. հաշվետվությունում Հայաստանի վարկանիշը բարելավվել է 7, Վրաստանինը՝ 17, իսկ Ադրբեջանինը՝ ընդամենը 1 միավորով: Հայաստանը, ինչպես նախորդ տարի, պահպանել է առաջատարի դիրքերը հարևան Թուրքիայի, Ադրբեջանի, Իրանի ու Ռուսաստանի նկատմամբ (տե՛ս *Աղյուսակ 3*): 2007թ. վարկանիշային հաշվետվության համեմատ Հայաստանի վարկանիշի ենթացուցիչներից բարելավվել են 5-րդ (վարկավորում), 8-րդ (միջազգային առևտուր) և 10-րդ (ձեռնարկության լուծարում) ենթամիավորները: Հայաստանն իր վարկանիշով գերազանցում է նաև աղյուսակում առանձնացված Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրների, ինչպիսիք են Հունգարիան, Բուլղարիան, Ռումինիան և Լեհաստանը:

«Գործարարության» վարկանիշը 2009-2010թթ., Հայաստանն այլ երկրների շարքում

2008թ. համեմատությամբ հաջորդ՝ 2009թ. վարկանիշային հետազոտությունում Հայաստանի ցուցանիշը կտրուկ հետընթաց է արձանագրել՝ 39-րդից 50-րդ: Ի տարբերություն Հայաստանի, ԱՊՀ երկրների շարքում թռիչքային կերպով արդյունքը բարելավել է Ադրբեջանը, որը եթե նախորդ զեկույցում զբաղեցնում էր 96-րդ դիրքը, ապա այս՝ 2009թ. հաշվետվությունում բարելավել է ցուցանիշը շուրջ 2,5 անգամ (տե՛ս *Աղյուսակ 5*): Արդյունքում՝ ԱՊՀ երկրների շարքում Ադրբեջանը զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը՝ զիջելով միայն Վրաստանին: 2008թ. համադրությամբ Ադրբեջանն առաջընթաց է արձանագրել 8 ենթացուցիչների պարագայում, հետընթաց՝ միայն երկուսի՝ 8-րդ և 10-րդ ենթացուցիչներում: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա վերջինս 2008թ. համեմատ միայն 9-րդ՝ պայմանագրերի իրագործման ենթացուցչով է բարելավում արձանագրել, մնացած բոլոր 9 ենթացուցիչների դեպքում նկատվել է բացասական միտում: «Գործարարության» 2009թ. վարկանիշային զեկույցում ԱՊՀ երկրների շարքում, ինչպես արդեն նշվեց, անհամեմատ բարձր ցուցանիշ է գրանցվել Վրաստանի պարագայում, որն իր վարկանիշով գերազանցել է Արևելյան Եվրոպայի այնպիսի երկրների, ինչպիսիք են Հունգարիան, Բուլղարիան և Ռումինիան, ինչպես նաև մերձբալթյան երեք երկրների ցուցանիշներին:

[1] Զեկույցում ներառված է 178 պետություն:

Աղյուսակ 3

«Գործարարության» վարկանիշը 2008թ., ԱՊՀ երկրներ[1]

Երկիր	Դիրքը, ընդհ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ											
Վրաստան	18	10	11	4	11	48	33	102	64	42	105
Հայաստան	39	47	73	48	2	36	83	143	118	64	42
Ղազախստան	71	57	173	22	72	48	51	44	178	28	100
Մոլդովա	92	81	153	93	46	97	98	111	122	17	82
Ղրղզստան	94	49	152	74	16	68	33	152	177	32	128
Ադրբեջան	96	64	159	80	56	26	107	141	173	30	75
Ռուսաստան	106	50	177	101	45	84	83	130	155	19	80
Բելառուս	110	119	94	43	94	115	98	178	137	16	69
Ուզբեկստան	138	54	145	67	119	170	107	159	165	48	119
Ուկրաինա	139	109	174	102	138	68	141	177	120	46	140
Տաջիկստան	153	161	166	125	43	135	176	155	176	23	99
Արևելյան/Կենտր. Եվրոպա և մերձբալթյան երկրներ[2]											
Էստոնիա	17	-	-	-	-	-	-	-	-	-	-
Լատվիա	22	-	-	-	-	-	-	-	-	-	-
Լիտվա	26	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հունգարիա	45	-	-	-	-	-	-	-	-	-	-
Բուլղարիա	46	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ռումինիա	48	-	-	-	-	-	-	-	-	-	-
Լեհաստան	74	-	-	-	-	-	-	-	-	-	-
Այլ երկրներ											
Թուրքիա	57	-	-	-	-	-	-	-	-	-	-
Իրան	135	-	-	-	-	-	-	-	-	-	-

Աղյուսակ 4

«Գործարարության» վարկանիշը 2008թ., Հայաստան և հարակից երկրներ

Երկիր	Դիրքը, ընդհ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ											
Վրաստան	18	10	11	4	11	48	33	102	64	42	105
Հայաստան	39	47	73	48	2	36	83	143	118	64	42
Թուրքիա	57	43	128	136	31	68	64	54	56	34	112
Ադրբեջան	96	64	159	80	56	26	107	141	173	30	75
Ռուսաստան	106	50	177	101	45	84	83	130	155	19	80
Իրան	135	77	164	141	143	68	158	97	135	57	118

Աղբյուրը՝ http://russian.doingbusiness.org/

[1] Թուրքմենստանը ներկայացված չէ:

[2] 2008թ. զեկույցում Արևելյան Եվրոպայի ու մերձբալթյան երկրների, ինչպես և Թուրքիայի ու Իրանի վարկանիշավորման ենթացուցիչների վերաբերյալ տվյալներ չեն հայտնաբերվել:

Աղյուսակ 5

«Գործարարություն» 2009թ., Հայաստան և այլ երկրներ

Երկիր	Դիրքը, ընդհ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ											
Վրաստան	16	5	9	10	2	27	38	112	85	42	95
Ադրբեջան	38	11	155	62	9	12	19	103	176	25	84
Հայաստան	50	65	75	57	6	41	88	151	136	61	49
Ղազախստան	64	79	177	33	26	41	53	61	182	37	54
Ղրղզստան	80	34	59	76	52	59	11	156	183	57	139
Բելառուս	82	98	63	40	13	109	105	183	134	14	74
Մոլդովա	108	90	159	140	51	84	105	125	140	15	91
Ռուսաստան	118	88	182	104	49	109	88	108	160	19	92
Ուզբեկստան	145	71	148	91	130	131	114	164	174	45	124
Ուկրաինա	146	126	181	90	144	27	143	182	139	46	145
Տաջիկստան	164	169	180	142	47	165	151	161	179	41	100
Արևելյան/Կենտր. Եվրոպայի երկրներ											
Հունգարիա	41	29	89	75	57	27	114	114	71	11	58
Բուլղարիա	42	81	117	46	58	4	38	97	105	87	78
Ռումինիա	45	30	87	110	112	12	38	148	43	30	88
Լեհաստան	72	145	157	69	86	27	38	147	41	71	85
Մերձբալթյան երկրներ											
Էստոնիա	22	23	19	159	24	41	53	39	3	29	61
Լիտվա	25	77	64	115	4	41	88	59	29	17	36
Լատվիա	30	35	78	125	79	12	53	37	17	2	89
Այլ երկրներ											
Թուրքիա	63	44	133	143	33	68	53	70	65	26	120
Իրան	142	73	162	137	152	109	164	107	132	54	109

Ինչ վերաբերում է 2010թ. վարկանիշային զեկույցին, ապա Հայաստանն իր վարկանիշը նախորդ հաշվետվության համեմատ թեև բարելավել է, սակայն շարունակում է զիջել հարևան երկու հանրապետություններին: Սույն զեկույցում արդյունքը զգալիորեն բարելավել է նաև Ղրղզստանը՝ ոչ մեծ տարբերությամբ առաջ անցնելով Հայաստանից: 2010թ. զեկույցում հարավկովկասյան հանրապետություններից ցուցանիշը բարելավել է նաև Վրաստանը: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերջինս պահպանել է նախորդ զեկույցում արձանագրված ցուցանիշը (38): Հայաստանն իր ցուցանիշով գերազանցել է Արևելյան/Կենտրոնական Եվրոպայի երկրներից Բուլղարիային, Հունգարիային, Ռումինիային և Լեհաստանին, սակայն զգալի տարբերությամբ զիջել է մերձբալթյան երեք հանրապետություններին (տե՛ս *Աղյուսակ 6*):

Աղյուսակ 6

«Գործարարություն» 2010թ., Հայաստան և այլ երկրներ[1]

Երկիր	Դիրքը, ընդհ.	1	2	3	4	5	6	7	8	9	10
ԱՊՀ երկրներ											
Վրաստան	11	5	7	9	2	30	41	64	30	41	95
Ադրբեջան	38	17	158	33	9	15	20	108	177	26	84
Ղրղզստան	41	14	40	47	19	15	12	156	154	54	140
Հայաստան	43	21	72	62	5	43	93	153	102	62	49
Բելառուս	58	7	44	32	10	113	109	183	129	12	74
Ղազախստան	63	82	143	38	31	43	57	52	182	34	54
Մոլդովա	94	77	161	141	17	87	109	101	140	22	90
Ռուսաստան	120	106	182	109	45	87	93	103	162	19	92
Ուկրաինա	142	134	181	83	141	30	109	181	139	43	145
Ուզբեկստան	150	92	142	95	133	135	119	178	174	44	125
Տաջիկստան	152	143	177	143	78	167	73	162	179	39	100
Արևելյան/Կենտր. Եվրոպայի երկրներ											
Բուլղարիա	44	50	119	53	56	4	41	95	106	87	78
Հունգարիա	47	39	88	77	61	30	119	122	70	14	58
Ռումինիա	55	42	91	113	92	15	41	149	46	55	91
Լեհաստան	72	117	164	76	88	15	41	151	42	75	85
Մերձբալթյան երկրներ											
Էստոնիա	24	37	20	161	13	43	57	38	3	49	61
Լիտվա	26	99	64	119	4	43	93	51	28	17	36
Լատվիա	27	51	78	128	58	4	57	45	22	15	88
Այլ երկրներ											
Թուրքիա	73	56	133	145	36	71	57	75	67	27	121
Իրան	137	48	141	137	153	113	165	117	134	53	109

Աղյուսակ 7

Հայաստանի վարկանիշի ենթացուցիչների դինամիկայի ընդհանուր պատկերը 2007-2010թթ.

Տարի	Դիրքը, ընդհ.	*1*	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*
2007	46	44	72	48	2	62	81	137	133	64	43
2008	39	47	73	48	2	36	83	143	118	64	42
2009	50	65	75	57	6	41	88	151	136	61	49
2010	43	21	72	62	5	43	93	153	102	62	49

[1] 2010թ. զեկույցում ընդգրկված է 183 երկիր։

ԻՐԱՆԻ «ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ»

Սնակ Սարուխանյան

Իրանում քաղաքական և ռազմավարական հետազոտությունների ոլորտում գործող կենտրոնների ընդհանուր թիվը հասնում է մոտավորապես 200-ի։ Դրանց մեծ մասը գործում են որպես հասարակական կազմակերպություններ կամ որպես համալսարաններին կից գործող հաստատություններ։ Վերջիններիս քանակը մոտենում է մոտավորապես 100-ի, գործունեությունն անմիջականորեն խրախուսվում է պետության կողմից, որը շահագրգռված է Իրանում վերլուծական, իսկ ինչպես իրանցիներն են ասում, «փիլիսոփայական» մտքի զարգացմամբ։

Սակայն լուրջ և ազդեցիկ «ուղեղային կենտրոնները», որոնք անմիջականորեն սպասարկում են պետական մարմինների գործունեությունն Իրանում, շատ չեն։ Դրանք գործում են կա՛մ պետական կառույցներին կից, կամ ունեն ոչպետական հասարակական կազմակերպությունների կարգավիճակ, սակայն, որպես կանոն, ղեկավարվում են նախկինում բարձրաստիճան պետական գործիչների կողմից, ուղղակի կամ անուղղակի ձևով ստանում են պետական ֆինանսավորում։ Միևնույն ժամանակ այս ուղեղային կենտրոնների շատ փորձագետներ, որպես կանոն, որոշ ժամանակ անց իրենք են անցնում աշխատանքի պետական կառավարման համակարգ, ինչն ապահովում է «ուղեղային կենտրոն – պետական համակարգ» հաջող կապի ստեղծում, դրական ազդեցություն է ունենում պետության կողմից կայացվող որոշումների մշակման արդյունավետության վրա։

Իրանի յուրահատկություններից մեկն է նաև այն, որ պետության տարածքում գործող «ուղեղային կենտրոնները» արտասահմանյան ֆինանսավորում չեն ստանում, մինչդեռ բնագիտական ոլորտում գործող հետազոտական և գիտական հաստատություններն իրականացնում են բազմաթիվ միջազգային ծրագրեր, այդ թվում նաև արտասահմանյան ֆինանսավորմամբ։

Ստորև ներկայացվող հաստատություններն Իրանի ամենից ազդեցիկ «ուղեղային կենտրոններն» են, որոնք սպասարկում են պետական կառավարման համակարգի տարբեր հատվածներին, կատարում են ազգային անվտանգությունից բխող բազմաթիվ գործառույթներ, այդ թվում նաև տեղեկատվական բնույթի։

«Ռազմավարական հետազոտությունների կենտրոն»

Ստեղծվել է 1989թ. Իրանի Իսլամական Հանրապետության նախագահին կից: 1997թ., երբ նախագահի պաշտոնից հեռացավ Ա.Ա. Հաշեմի-Ռաֆսանջանին, կենտրոնը դուրս բերվեց նախագահական աշխատակազմից և միացվեց Ընդունվող քաղաքական և տնտեսական որոշումների նպատակահարմարության խորհրդին (*Expediency Council*), որը 1997-ից մինչ օրս ղեկավարվում է նախկին նախագահ Ա.Ա. Հաշեմի-Ռաֆսանջանիի կողմից:

Կենտրոնի ***աշխատակիցների թիվը***, ներառյալ տեխնիկական անձնակազմը, ***25 հոգի է***: Աշխատող 10 փորձագետներից բոլորն էլ ԱԳՆ և հետախուզության նախկին աշխատակիցներ են: Կենտրոնի ղեկավարը 1997-2009թթ. նախկին փոխարտգործնախարար Մահմուդ Վաեզին էր, որը 1989-1997թթ. ԱԳՆ-ում պատասխանել է Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի շրջանում տարվող քաղաքականության համար, 1992-1993թթ. հայ-ադրբեջանական հրադադարի հաստատման բանակցություններում եղել է միջնորդ: 2009թ. հունվարից Կենտրոնի նախագահն է Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի նախկին քարտուղար Հասան Ռուհանին:

Կենտրոնը ***ֆինանսավորվում է*** Ընդունվող քաղաքական և տնտեսական որոշումների նպատակահարմարության խորհրդի աշխատանքների շրջանակներում, որն իր հերթին հատուկ հոդվածով ֆինանսավորվում է Իրանի պետական բյուջեից:

Կենտրոնը ***տեղակայված է*** Թեհրանի հյուսիսում, Նիավարան այգու հարևանությամբ, մայրաքաղաքի ամենաթանկ մասում և ունի բավական մեծ ու տեխնիկապես լավ հագեցած տարածք: Ինտերնետային կայքի հասցեն է՝ www.csr.ir:

Կենտրոնը կազմակերպում է ***սեմինարներ և կոնֆերանսներ***, որոնց մեծ մասը միջազգային չեն: Հիմնականում Պարսից ծոցում տեղ գտած զարգացումների մասին են, իսկ հրավիրվող փորձագետները՝ արաբական երկրներից: Վերջին տարիներին կենտրոնի կազմակերպած կոնֆերանսների մեծ մասը նվիրված է Իրաքի հիմնախնդիրներին: Մասնակիցների թվում կան նաև Իրաքի շիական քաղաքական և կրոնական գործիչներ:

Պարսից ծոցի հիմնախնդիրներին են նվիրված նաև կենտրոնի հրատարակումների մեծ մասը, որոնք, սակայն, հիմնականում քարոզչական բնույթ ունեն:

«Քաղաքական և միջազգային հետազոտությունների ինստիտուտ»

Ի տարբերություն Ռազմավարական հետազոտությունների կենտրոնի՝ Քաղաքական և միջազգային հետազոտությունների ինստիտուտը ավելի բաց կառույց է, սակայն անհամեմատ ավելի փոքր ազդեցություն ունի քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա։

Ինստիտուտը որպես առանձին դեպարտամենտ ***ստեղծվել է 1990թ.*** Իրանի ԱԳՆ կից, իսկ 1992թ. ստացել է ինստիտուտի կարգավիճակ, որի աշխատանքներն անմիջականորեն ղեկավարվում են Իրանի արտաքին գործերի նախարարի հետազոտությունների և կրթական ծրագրերի գծով տեղակալի կողմից։ Ինստիտուտն իր ողջ անձնակազմով սպասարկում է Իրանի ԱԳՆ Դիվանագիտական ակադեմիայի աշխատանքները։

Ինստիտուտի ***աշխատակիցների թիվը հասնում է 50-ի***, որոնցից միայն կեսն է զբաղվում հետազոտական աշխատանքներով։ Մնացած մասը թարգմանիչներ են, խմբագիրներ, կազմակերպչական և հրատարակչական ոլորտների աշխատակիցներ։ Հետազոտողների մեծ մասն իրանական համալսարանների դասախոսներ են և ԱԳՆ գործող աշխատակիցներ։

Ինստիտուտն ***ամբողջությամբ ֆինանսավորվում է*** կառավարության կողմից՝ ԱԳՆ հատկացված ծախսերից։ Հետազոտող-աշխատակիցների միջին աշխատավարձը կազմում է 3000 ԱՄՆ դոլար։

Ինստիտուտը ***Թեհրանի հյուսիսային մասում է***, Թաջրիշ թաղամասում, ԱԳՆ-ից մոտ 1 կմ հեռավորության վրա։ Կայքի հասցեն է՝ www.ipis.ir։

Ինստիտուտի գործունեության ***հիմնական ուղղություններից է միջազգային կոնֆերանսների*** կազմակերպումը։ Դրանցից ամենից հայտնիներն են ամեն տարվա մարտին և հոկտեմբերին կազմակերպվող «Պարսից ծոց» ու «Հարավային Կովկաս և Կենտրոնական Ասիա» կոնֆերանսները՝ նվիրված տարածաշրջանային զարգացումներին։ Կոնֆերանսին հրավիրվում են տարածաշրջանի հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներ աշխարհի տարբեր երկրներից, այդ թվում նաև Հայաստանից։

Ինստիտուտի կողմից հրատարակվող նյութերի մեծ մասը կազմակերպված կոնֆերանսների արդյունքների և ելույթների մասին են, մի մասն ուսումնական գրականություն է Դիվանագիտական ակադեմիայի ուսանողների և դոկտորանտների համար։

Նշենք նաև, որ ինստիտուտի գործունեությունը հիմնականում քարոզչական նշանակություն ունի։ Այստեղ կազմակերպված կոնֆերանսների մեծ մասն Իրանի ԱԳՆ ղեկավարի համար արտաքին քաղաքականության ելույթների հարթակ է դառնում, կապեր են հաստատվում արտասահմանցի մասնագետների հետ, որոնք, ըստ հավաստի աղբյուրների, շատ հաճախ ֆինանսական բաղկացուցիչ են ունենում։

«Ազգային հետազոտությունների ինստիտուտ»

Իրանի ***«Ազգային հետազոտությունների ինստիտուտը»*** (ԱՀԻ) ստեղծվել է ***1997թ.*** ազգային ինքնությանը, կրոնական և ազգային փոքրամասնություններին նվիրված հետազոտությունների անցկացման համար: ԱՀԻ-ը ոչկառավարական և շահույթ չհետապնդող կազմակերպության կարգավիճակ ունի, սակայն, ըստ հավաստի տվյալների, ***ֆինանսավորվում է Իրանի ներքին գործերի նախարարության, Կրթության նախարարության և Տեղեկատվության նախարարության*** (Ազգային անվտանգության նախարարություն) կողմից:

ԱՀԻ-ում ***աշխատում է 15 մարդ***, որոնց մեծ մասը տեխնիկական բնույթի աշխատանքների մեջ է ընդգրկված: Ինստիտուտի գործունեությունն ապահովվում է հիմնական այլ հաստատություններում աշխատող հետազոտողների և մասնագետների միջոցով, որոնց պատվիրվում են աշխատանքներ ազգային ինքնության և փոքրամասնությունների վերաբերյալ:

ԱՀԻ-ն ակտիվ մասնակցություն ունի ազգային և կրոնական փոքրամասնությունների բնակման վայրերում գործող կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերի կազմման գործում: Այս գործունեության հիմական ուղղությունը կրթական ծրագրերում ազգային պատկանելության հիմնախնդիրների քննարկումն է և ներկայացումն այն տեսքով, որն ապահովում է անջատողականության, ազգայնականության զգացմունքների նվազում, սերմանում է ընդհանուր իրանական ինքնագիտակցություն: Այս աշխատանքները տարվում են բավական գրագետ, քանի որ զուտ ֆորմալ տեսակետից դրանք ուղղված են ինքնագիտակցության բարձրացմանը, այլ ոչ թե նվազմանը: Օրինակ, Իրանի Ադրբեջան նահանգներում բոլոր փոքր և մեծ բնակավայրերում գործող դպրոցներում ներդրվում են բնակավայրերի և բնակչության պատմության դասընթացներ: Դրանք, սակայն, բնակավայրերի պատմությունը ներկայացնում են որպես ամբողջովին ուրույն և յուրահատուկ, տարբերվող հարևան բնակավայրի և համայնքի պատմությունից: Սա, փաստորեն, հատուկ մեթոդական քաղաքականություն է՝ ուղղված ազգային փոքրամասնության ***ընդհանուր*** ինքնագիտակցության տրոհմանը:

Ինստիտուտի տնօրենը Թեհրանի համալսարանի պրոֆեսոր Ալի Քարիմին է:

Ինստիտուտն ունի ինտերնետային կայք՝ http://www.rinsweb.org:

ԱՀԻ-ն ակտիվորեն համագործակցում է օտարերկրյա իրանագետների հետ, կազմակերպում նրանց այցելություններն Իրան և ֆինանսավորում ազգային ինքնության խնդիրներին վերաբերող նրանց հետազոտությունները: Ամենից ակտիվ կապերը հաստատված են գերմանացի և հոլանդացի իրանագետների հետ, ինչը մասամբ պայմանավորված է Գերմանիայում և Նիդեռլանդներում առկա մեծաքանակ իրանական համայնքի և իրանագիտության դպրոցի առկայության հետ:

«Կասպիական հետազոտությունների միջազգային ինստիտուտ»

«Կասպիական հետազոտությունների միջազգային ինստիտուտը» (ԿՀՄԻ) Իրանի խոշոր և ազդեցիկ ուղեղային կենտրոններից է: Կառուցվածքային տեսակետից ոչկառավարական և խորհրդակցային (консалтинговый) կազմակերպություն է, որն իրականացնում է հետազոտություններ Կասպից ծովի քաղաքական, իրավական և էներգետիկ հիմնախնդիրների վերաբերյալ: Սակայն սրանով ԿՀՄԻ գործունեությունը չի սահմանափակվում, քանի որ այստեղ մշակվում են ընդհանուր էներգետիկ քաղաքականության և ռազմավարության սկզբունքները, իրականացվում են գործառույթներ, որոնք բխում են Իրանի արտաքին քաղաքականության ուղղություններից:

Ինստիտուտը ստեղծվել է ***1998թ.***: Փորձագետների մեծ մասը Իրանի ԱԳՆ նախկին կամ ներկա աշխատակիցներ են, կան մասնագետներ, որոնք միաժամանակ աշխատում են նաև Ընդունվող քաղաքական և տնտեսական որոշումների նպատակահարմարության խորհրդում:

Ինստիտուտը կառավարվում է ***Ակադեմիական խորհրդի կողմից, որի 12*** անդամները բարձր որակավորման մասնագետներ և դիվանագետներ են: Աշխատակիցների ընդհանուր թիվը ***հասնում է 20-ի***:

ԿՀՄԻ-ն ***ֆինանսավորվում է Իրանի ԱԳՆ և Նավթի նախարարությունների*** կողմից: Ունի ֆինանսավորման նաև ոչպետական աղբյուրներ: Ըստ որոշ տեղեկությունների՝ ԿՀՄԻ-ն իրականացնում է Կենտրոնական Ասիայում և Ռուսաստանում ներդրումներ կատարող իրանական ընկերությունների շահերի պաշտպանություն և տրամադրում է համապատասխան խորհրդատվություններ: Ինստիտուտի գործունեության արդյունավետությունն ապահովվում է նաև այն հանգամանքով, որ այստեղ են մշակվում Կենտրոնական Ասիայում իրանական արտաքին քաղաքականության հիմնադրույթներն ու ուղղությունները: Ինստիտուտի աշխատակիցների և փորձագետների մի մասն ունի բավական բարձր մակարդակի արևմտյան կրթություն: Այդ թվում նաև Ինստիտուտի հիմնադիր-տնօրեն ***Աբբաս Մալեքին***, ով ավարտել է ***Հարվարդի համալսարանը և հետակա աշխատում է նույն Հարվարդի Ջ.Քենեդու անվան կառավարման դպրոցի հետ:***

ԿՀՄԻ յուրահատկություններից է նաև այն, որ Ինստիտուտը համագործակցում է առաջատար ամերիկյան հետազոտական կենտրոնների ու փորձագետների հետ, իսկ Ինստիտուտի մասնագետները, և առաջին հերթին տնօրեն Ա.Մալեքին, հաճախ հրատարկվում են առաջատար ամերիկյան վերլուծական ամսագրերում ու թերթերում: ԿՀՄԻ վրա դրված են «public diplomocy»-ի շատ կարևոր ֆունկցիաներ: Սրանից ելնելով՝ ԿՀՄԻ փորձագետները հաճախ ար-

տահայտում են Իրանի պետական քաղաքականության կուրսին որոշակիորեն հակասող տեսակետներ, ինչի արդյունքում ստեղծվում է թյուր տպավորություն Ինստիտուտի կիսաընդդիմադիր լինելու վերաբերյալ:

ԿՀՄԻ-ն ունի պաշտոնական կայք՝ http://www.caspianstudies.com:

Վերը նշված բոլոր կենտրոններն ակտիվ դեր են խաղում Իրանում քաղաքական մշակումների ոլորտում: Միևնույն ժամանակ, դրանք նաև որոշակի գիտահետազոտական նշանակություն ունեն, քանի որ իրականացնում են կիրառական ոլորտին առնչվող մշակումներ:

ՎՐԱՑԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Թամարա Վարդանյան

Ներածություն

Վրաստանի ժողովրդագրական կազմի փոփոխության ողջ տրամաբանությունը, հատկապես 19-20-րդ դարերի ընթացքում, ցուցիչն է երկրում իրականացվող ազգային պետության կերտման ինտենսիվ գործընթացների: Վրաստանը բազմէթնիկ հանրույթից աստիճանական անցում է կատարում դեպի առավելապես միաէթնիկ պետության: Դեռևս 1983թ. ազգի և ազգայնականության խոշոր տեսաբան Է.Գելները նշել է, որ իդեալական մոդելն այն է, երբ ազգի և պետության սահմանները համընկնում են[1]: Ըստ տեսաբանի, ազգայնականությունը սկզբունք է, որի նպատակն է հասնել քաղաքական և ազգային միավորումների սահմանների հավասարեցմանը: Այս մոդելը դիտարկվում է նաև որպես էթնիկ հակամարտությունների կանխարգելման և լուծման արդյունավետ ուղիներից մեկը: Ազգային պետության հիմնական բնորոշիչն այն է, երբ քաղաքական իշխանությունն իրականացվում է տվյալ պետության սահմաններում բնակվող էթնիկ միավորի կողմից:

Երկրի ժողովրդագրական պատկերն առանցքային խնդիր է նաև ազգային անվտանգության տեսակետից: Ակնհայտ է, օրինակ, որ ՀՀ-ի առավելագույնս միաէթնիկ կառուցվածքը հանդիսանում է ծանրակշիռ գործոն, ռեսուրս, ինչպես նաև ներքաղաքական անվտանգության որոշակի երաշխիք: Գրեթե բոլոր երկրների և բոլոր ժամանակների պատմությունները ցույց են տալիս, որ էթնիկ կամ կրոնական փոքրամասնությունները որպես կանոն առիթ են ստեղծում արտաքին ուժերի և հարևան պետությունների կողմից օտար ծագում ունեցող տարրն օգտագործելու որպես ներքին խմորումների սանձազերծման գործոն: Իսկ այդ փոքրամասնություններին հաճախ վերապահվում է տվյալ երկրում 5-րդ շարասյան գործառույթ և առաքելություն:

Անշուշտ, այս իրողությունները քաջ գիտակցելով՝ Վրաստանի ազգայնական վերնախավն իրականացնում է էթնիկ և կրոնական փոքրամասնությունների ինտենսիվ ձուլման՝ վրացացման քաղաքականություն: Նշված քա-

[1] *E.Gellner,* Nations and Nationalism, Ithaca: Cornell University Press, 1983.

ղաքականության առաջխաղացման մեջ կարևոր դերակատարում ունի վրացական ազգայնական մտավորականությունը, որը տասնամյակների ընթացքում գաղափարական ամուր հենք է ձևավորել դրա համար: Այսպիսով, վրացական ազգայնականությունն ունի հարուստ փորձ, գաղափարական կուռ ամբողջական համակարգ, որոշակի ձուլման մեխանիզմներ ու վարչական լծակներ, որպեսզի երկրում իրականացնի էթնիկ և կրոնական փոքրամասնությունների վրացացման ծրագիր:

Այդ քաղաքականությունն իրենից ներկայացնում է համակարգային երևույթ, որտեղ առանցքային դերակատարում է վերապահված նաև պետական վարչական մեքենային, համալսարանական կենտրոններին և ակադեմիական հանրույթին: Վերջինս էլ պետք է գիտականորեն հիմնավորի այդ գործընթացների ճշմարտացիությունն ու անհրաժեշտությունը՝ հղումներ կատարելով պատմությանն ու քաղաքագիտությանը: Ուստի վրացացման գործընթացները ներառում են ոչ միայն կենցաղային, մշակութային, կրթական, կրոնական և միջէթնիկ հարաբերությունների ոլորտները, այլև որպես հիմնական ուղենիշ հանդիսացող պետական/ազգային գաղափարախոսությունները:

Վրացացման գործընթացների զինանոցը

Լեզու

Վրացացման գործընթացների կարևորագույն զենքը **վրացերեն լեզուն է:** Ազգակերտման գործընթացների ուսումնասիրողներից շատերը (Օ.Բաուեր, Յու.Բրոմլեյ, Յու.Արուտյունով, Լ.Աբրահամյան և այլք) նշում են, որ լեզուն ինքնության առաջնային, տեսանելի ցուցիչն է և մեծ դերակատարում ունի էթնոգենեզի ընթացքում: Հայտնի է, որ լեզուն ունի մտահաղորդակցական և էթնոսոցիալական գործառույթներ: Ներկայիս արևմտյան հետազոտողները նույնպես նշում են, որ վրացիների ազգային գիտակցությունում խիստ զարգացած է **լեզվական կողմնորոշման ձևը** ***(форма языковой ориентации)***: Վրաստան ժամանողին միանգամից ապշեցնում է «վրացերեն լեզվի կենտրոնականությունը, նրա գործածականությունն ինչպես կենցաղում, այնպես էլ մշակութային համատեքստում»[1]:

Այսպիսով, վրացերեն լեզուն այն հզոր միջոցն է, որը, տարածվելով էթնիկ և կրոնական փոքրամասնությունների շրջանում, արագացնում է վերջիններիս ինքնության վերափոխումները դեպի վրացականություն, գործընթաց, որի հանգուցակետը վերջնական ձուլումն է վրացական հանրույթի մեջ: Ինչ-

[1] См. Languge myths and the discourse of nation-biulding in Georgia, - In: *Nation-biulding in the post-Soviet bordelands: the politics of national identities*/ Smith G…[et al.], Cambridge University Press, 1998, p.168.

պես նշում է ազգագրագետ Լ.Աբրահամյանը, «Եվ՝ Խորհրդային Վրաստանի, և՝ անկախ Վրաստանի լեզվական քաղաքականությունն արտացոլանքն է բոլոր այն քաղաքական խնդիրների, որոնք անցյալում առկա էին և այսօր էլ կան Վրաստանում էթնիկ փոքրամասնությունների ներկայության հետևանքով»[1]:

Սա է պատճառը, որ հայոց լեզվի կարգավիճակի հարցը Ջավախքում լուրջ հակազդեցություն է առաջացնում վրացական կառավարական, հասարակական և գիտական շրջանակներում: Միաժամանակ նույն շրջանակներում խոր հակակրանքի տեղիք է տալիս ջավախահայության՝ վրացերենին չտիրապետելու փաստը: Այսինքն՝ այս պարագան կարևոր ահազանգ է վրաց վերնախավին առ այն, որ ջավախահայության ձուլման քաղաքականությունը կարող է և հաջողությամբ չավարտվի: Գ.Խաինդրավան մի հարցազրույցի ժամանակ նշել է, որ «Ջավախքում խնդիրները կապված են ոչ թե հայերեն լեզվի հետ, այլ վրացերենի: Եվ Հայաստանի կողմից բարեկամական քայլ կդիտվեր, եթե հայկական կողմը մտահոգվեր Ջավախքում վրացերենը տարածելու խնդրով, քանի որ բոլորն առանց այդ էլ խոսում են հայերեն»[2]:

Վրացերենի ներդրման միջոցով Կախեթիում հազարավոր հայեր են վրացացել: Հայկական գյուղերում գործող հայկական դպրոցներն աստիճանաբար վերածում էին վրացականի, երկու-երեք տասնամյակ անց տեղի հայության մի հատվածը թերևս ամբողջովին **վրացացել է:**

Ի դեպ, նույն քաղաքականությունն այսօր կիրառվում է Թբիլիսիի հայկական դպրոցներում, որոնցում հայկական դասարաններին կից բացվել են վրացական սեկտորներ: Վերջին մի քանի տարիների ընթացքում վրացական սեկտորների հայազգի աշակերտների թիվը գերազանցում է հայկական սեկտորներում սովորող հայ աշակերտների թվին, քանի որ վրացականները լուրջ ուշադրության և հոգածության են արժանանում դպրոցի վարչական ղեկավարության կողմից հագեցվում են տեխնիկայով, հարմարավետ լսարաններով, ուստի և ավելի հրապուրիչ են դառնում հայազգի աշակերտների համար:

Կրոն

Վրացացման գործընթացներում հաջորդ կարևորագույն գենքը **Վրաց Ուղղափառությունն** է: Վրաստանում անկախության տարիներին ընթացող ազգային համախմբման գործընթացներում որպես կատալիզատոր հանդես է գալիս կրոնը: Այստեղ ընթանում են «Մեկ ազգ, մեկ կրոն» մոդելի ստեղծման անթաքույց գործընթացներ: Ինչպես նշում է Մ.Ջավախիշվիլին, «...սկսած 20-

[1] См. *Abrahamian L.*, Armenian Identity in a changing world, Mazda press, 2006, cc. 74-76.

[2] *Хаиндрава Гоги,* «Армяне и грузины – никакие не друзья, да и друзьями никогда не были». http://news.am/ru/news/7153.html

րդ դ. 90-ականներից «վրացի» և «ուղղափառ» հասկացությունների միջև դրվեց հավասարության նշան: Ամբողջ Վրաստանը պետք է դառնա միադավան երկիր, բոլոր վրացիները պետք է լինեն ուղղափառ»[1]: Մինչև այսօր Վրաստանի այլ կրոնական փոքրամասնություններն իրավական կարգավիճակ չունեն: Վրաստանում բավական մեծ հեղինակություն է վայելում Վրաց Ուղղափառ եկեղեցին և նրա առաջնորդը: Այսպես, երբ 2003թ. նախատեսվում էր Վրաստանի և Վատիկանի միջև համաձայնագրի ստորագրումը, գործընթացն անհապաղ կասեցվեց Վրաց Ուղղափառ եկեղեցու կողմից: Վրաց Պատրիարքը հայտարարեց, որ «տվյալ փաստը կարող է օգտագործվել մյուս դավանանքների կողմից՝ Վրաստանում հաստատվելու նպատակով, ինչը նոր և լուրջ խնդիրներ կհարուցի մեր պետության ներսում»[2]:

Նույն Մ.Ջավախիշվիլին նշում է, որ կաթոլիկներին Վրաստանում անվանում են «աղանդավորներ», «հերետիկոսներ», «օտարներ»: Ուղղափառ քարոզիչները հայերին նույնպես հաճախ անվանում են «հերետիկոսներ» կամ «սատանայականներ», հայերի միաբնակության մասին տարրական գիտելիքների բացակայության արդյունքում[3]:

Բազմաթիվ փաստեր կան, թե ինչպես են իրականացվում ուղղափառ եկեղեցու շուրջ և Վրաց Ուղղափառ եկեղեցու սպասավորների կողմից հայության շրջանում հոգեորսության աշխատանքները: Այսպես, Թբիլիսիի հայաշատ թաղամասում՝ Հավլաբարում, Մ.Սահակաշվիլիի օրոք կառուցվեց մեծ ու շքեղ վրացական եկեղեցի՝ Սամեբա անունով: Ներկայումս Հավլաբար թաղամասում բնակվող հայերն արդեն հաճախում են հենց նշված եկեղեցին:

Նմանատիպ գործընթացներ տեղի են ունենում Ջավախքում: Այսպես, Նինոծմինդայի շրջանի Փոկա գյուղում վրացիներ չկային: Բայց վրացիները գյուղում 5 տուն են գնել, որտեղ բնակվում են վրաց կույսերը և վանականները՝ Փոկայի սբ. Նինոյի եկեղեցու կենվորները: Հարցազրույցից մեկի ժամանակ մայրապետ Էլիսաբեթը նշել է, որ ուղղափառ ծեսով նրան հաջողվեց մկրտել մի ամբողջ հայ ընտանիք, քանի որ, ինչպես ինքն է նշում, մկրտվողները հասկացան, որ ուղղափառ հավատքն ավելի ճշմարիտ է[4]: Հետագայում Ս.Կարապետյանի տվյալների համաձայն, 2003թ. հաջողվել էր վրաց ուղղափառ եկեղեցում վերամկրտել փոկացի բազմաթիվ հայերի, ընդ որում՝ իբրև թե տեղի հայերն իրենք էին դիմում վրաց եկեղեցու ավազանում վերամկրտվելու խնդրանքով, քանի որ հասկացել էին «ուղղափառ եկեղեցու առավելությունը»[5]:

---

[1] *Джавахишвили М.,* Что значит быть *католиком в Грузии в XX веке,* Идентичность, власть и город в работах молодых ученых Южного Кавказа, сб. ст., ред. *Лежава Н.,* Тб., Фонд имени Г. Белля, 2005, с. 116.

[2] http://www.centrasia.ru/newsA.php?st=1063998660

[3] *Վարդանյան Թ.,* Թիֆլիսի հայ համայնքը. նոր մարտահրավերներ, հին խնդիրներ, 21-րդ Դար. Նորավանք ԳԿՀ տեղեկատվական-վերլուծական հանդես, թիվ 4, 2006, էջ 112:

[4] Մանրամասն տե՛ս *Մելիքիշվիլի Նինո*, Ռեզոնանսի, թիվ 161, 21.06.2001թ., թարգմանեց Վ.Սարգսյանը:

[5] *ԿարապետյանՍ.,* Ջավախք, Գիրք Թ, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2006, 515:

Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմն իսկապես լուրջ աշխատանքներ պետք է իրականացնի հոգեորսության դեմ պայքարելու ուղղությամբ: Վերջին ժամանակներում Վիրահայոց թեմի անմիջական ջանքերով հրատարակվել են եկեղեցական օրացույցներ, գրքույկներ, որոնք հնարավորություն կտան վիրահայությանը տոնել եկեղեցական տոները Հայ Առաքելական եկեղեցու տոնացույցով: Բայց առայժմ վիրահայությունն ամբողջությամբ չի պատկերացնում կրոնի միջոցով ձուլման բոլոր հնարավոր հետևանքները և մեծամասամբ դեռ շարունակում է գտնվել Վրաց Ուղղափառ եկեղեցու հոգևոր քարոզչության դաշտում:

Գաղափարախոսություն. «Վրաստանը վրացիների համար» կարգախոսը որպես քաղաքական ծրագիր

Էթնիկ և կրոնական փոքրամասնությունների վրացացման գործընթացը տասնամյակների ընթացքում զգալի հաջողություններ չէր արձանագրի, եթե այն չունենար կուռ, ամբողջական, համակարգված գաղափարական հենք: Բացի այդ, նշված գաղափարական հենքը, որպես կանոն, շոշափելի արդյունքներ է տալիս միայն այն ժամանակ, երբ որդեգրվում է պետական համակարգի կողմից, քանի որ այս դեպքում է, որ նշված խնդրի լուծմանը ծառայեցվում է նաև ողջ վարչական և քարոզչական մեքենան:

Վրացական ազգայնականության կողմից դեռևս 20-րդ դ. սկզբին ազգային պետության ստեղծման գաղափարը ստացավ գաղափարական, քաղաքական ծրագրի տեսք: Այն արտահայտվեց «Վրաստանը վրացիների համար» կարգախոսի միջոցով՝ որպես ազգային պետականության ստեղծման նախագիծ:

Հայտնի է, որ 20-րդ դ. սկզբին Անդրկովկասի էթնիկ կազմն ու ժողովուրդների բնակեցվածությունը խիստ բազմազան էր: Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարար կոմս Ի.Ի.Տոլստոյն Անդրկովկասում տիրող իրավիճակի մասին հուշերում գրում է. «Չկա մի տարածք, որ խառը չլինի: Ոչ ոք չի կարող հստակ ասել՝ Թիֆլիսը վրացակա՞ն քաղաք է, թե՞ հայկական…, կամ կհամաձայնե՞ն արդյոք հայերը Բաքվի նահանգը ճանաչել որպես թաթարական երկիր: Միայն կարող եմ հաստատ ասել, որ թաթարները չեն համաձայնվի, թե Բաքուն հայկական է»[1]:

Մեր տարածաշրջանում տարածքային կենտրոնացման գործընթացները մեծ թափ ստացան հատկապես 19-րդ դ. վերջերին - 20-րդ դ. սկզբներին: Ռուսական կայսրության տարածքում բնակվող էթնիկ փոքրամասնությունների շրջանում ձևավորում էին միատարր վարչական-քաղաքական միավորներ ստեղծելու քաղաքական ծրագրեր: Դրանք հետագայում ազգային պետու-

[1] Воспоминания министра народного просвещения графа И.И.Толстого (31 октября 1905г. – 24 апреля 1906г.), Серия “Мемуары русской профессуры”, кн.2, 1997, с.122.

թյունների ստեղծման համար տարածքային հիմք պետք է ծառայեին:

Այսպես, դեռևս 1903թ. մայիսի 1-ից Փարիզում երկու լեզվով (վրացերեն և ֆրանսերեն) սկսեց հրատարակվել «Սաքարթվելո» (Վրաստան) խորագրով քաղաքական լրագիրը: Լրագրի նպատակն էր վրաց ժողովրդի շրջանում արթնացնել ազգային և քաղաքացիական գիտակցություն՝ այդպիսով հող նախապատրաստելով Վրաստանի ինքնավարության համար[1]: Այնուհետև 1904թ. ձևավորվեց վրաց սոցիալ-ֆեդերալիստների ազգայնական կուսակցությունը: Գ.Գալոյանը նշում է, որ «...այդ կազմակերպության կորիզը դարձավ վերոհիշյալ «Սաքարթվելո» լրագիրը՝ վրացական նացիոնալ-ֆեդերալիստների արտասահմանյան խմբի օրգանը»[2]: «Սաքարթվելո» ազգայնական կազմակերպության ղեկավարն էր Ա.Ջորջաձեն: Կազմակերպության կողմից որպես իրենց առջև դրված քաղաքական նպատակի հիմնական արտահայտիչ հռչակվեց «**Վրաստանը վրացիների համար»** կարգախոսը:

Վրաց սոցիալ-ֆեդերալիստների կուսակցության հիմնական ծրագրային պահանջը «ռուսական բուրժուա-կալվածատիրական պետության սահմաններում Վրաստանի ինքնավարության ստեղծումն էր»[3]: Այսինքն՝ ազգային պետության կերտման համար վրաց ազգայնականությանն անհրաժեշտ էր էթնիկապես միատարր տարածք: Ինքնավարությունը պետք է ծառայեր որպես տարածքային հիմք նման վարչական–քաղաքական միավորի ստեղծման համար: Փաստորեն, վրաց իրականության մեջ տարածքային կենտրոնացման գաղափարն արդեն 20-րդ դ. սկզբին հանդես եկավ որպես քաղաքական օրակարգային ծրագիր:

Ֆեդերալիստների նշված տարածքները, որոնք պետք է ընդգրկվեին ինքնավար Վրաստանի մեջ, էթնիկ տեսանկյունից միատարր չէին: Այնտեղ ապրում էին բավական մեծ թվով հայեր, ռուսներ, թաթարներ, չերքեզներ, լեռնային լեզգիներ և այլն, որոնք ինքնավարության պայմաններում անխուսափելիորեն կհայտնվեին ազգային փոքրամասնության մեջ:

Տեղական թիֆլիսյան մամուլում էթնիկ միատարր տարածքի ստեղծման գաղափարը նույնպես լայն արձագանք գտավ: Թիֆլիսում հրատարակվող «Ախալի Դրոեբա» թերթը նույնպես էթնիկ միատարր վարչական-քաղաքական միավորի անհապաղ ստեղծման ջատագով էր: Ներկայացնենք թերթի խմբագրության դիրքորոշումն ազգային հարցում. «Մենք այն վեհ ազգայնականության կողմնակիցն ենք, որը չի ցանկանում մյուս ազգերին այն, ինչը չէր ցանկանա ինքն իրեն, և դրա համար ոչ ոք չի համարձակվի մեզ «շովինիստ» անվանել: Մենք ազգի ամբողջական ինքնավարության կողմնակիցն ենք, քանի որ

[1] Վրաստանը և ազգային ինքնավարության հարցը Կովկասում, Դրոշակ, Ժնև, 1903, թիվ 9, էջ 147-148:

[2] *Գ.Գալոյան,* Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները, Երևան, 1978, էջ 451:

[3] *Муджири А.Н.,* Политические партии и национальный вопрос в Закавказье в период подготовки и проведения Октябрьской революции, Тбилиси, 1970, с.20.

այնտեղ, որտեղ խոսում են 100 լեզուներով, անհնար է հասկանալ առանձին քաղաքացու կարիքներն ու պահանջները, հետևաբար, ***անհնար է նաև համատեղ քաղաքական կյանքը***» (ընդգծումը մերն է՝ Թ.Վ.)[1]:

Այս նույն գաղափարախոսությունը հետագայում որդեգրեց Վրաստանի նախագահ, ծայրահեղ ազգայնական Զ.Գամսախուրդիան (Վրաստանի նախագահ է ընտրվել 1991-1992թթ.), որի կառավարման տարիներին վիրահայությանը սպառնում էր ոչ միայն աստիճանական վրացացում, այլև շատ հաճախ վիրահայությունը ֆիզիկական ոչնչացման անմիջական տագնապ էր ապրում: Այդ տարիներին Հավլաբարում տեղի հայությունն ինքնապաշտպանության և ինքնակազմակերպման միջոցառումներ էր ձեռնարկում, քանի որ ստեղծված ոստիկանական խմբերը (Մխեդրիոնի անվամբ), մեծ վտանգ էին ներկայացնում էթնիկ փոքրամասնությունների համար, ավազակային հարձակումներ գործում և սպառնում վերջիններիս գույքի, սեփականության և անձի անվտանգությանը:

Ներկայումս՝ Մ.Սահակաշվիլիի օրոք, էթնիկ փոքրամասնությունների վրացացման գործընթացները նոր թափ և որակ են ստացել, քանի որ Վրաստանում ազգային պետություն ստեղծելու ծրագիրը նաև լուրջ աջակցություն է ստանում աշխարհաքաղաքական ուժի արևմտյան կենտրոններից: Մ.Սահակաշվիլիի քաղաքականությունը թեև նպատակներով չի տարբերվում իրեն նախորդող ազգայնական գործիչների ծրագրերից, այնուամենայնիվ, տարբերվում է մեթոդներով: Այն հագեցված է ժողովրդավարական-ազատական կարգախոսներով, ազգերի հավասարության, ինտեգրացման անհրաժեշտության և երկրի հզորացման մասին կոչերով:

[1] Տե՛ս газета “Кавказ”, Тбилиси, 1906, но.52.

ԻՍԼԱՄՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Արաքս Փաշայան

Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում իսլամն էական նշանակություն է ձեռք բերել: Իսլամի դերի ակտիվացումն Ադրբեջանում, ըստ էության, պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից են՝ սոցիալ-տնտեսական խնդիրները, հիասթափությունն իշխանությունների և պաշտոնական իսլամի ներկայացուցիչների նկատմամբ, խոսքի ազատության բացակայությունը և այլն: Գիտակցելով աշխարհիկ ինստիտուտներին սպառնացող մարտահրավերները՝ Ադրբեջանի իշխանությունները մշտապես փորձում են թուլացնել կրոնի դերը, ինչը դրսևորվում է կրոնական իրողությունների նկատմամբ տարաբնույթ սահմանափակումների կիրառմամբ:

Փաստացիորեն, Հեյդար Ալիևի իշխանության գալուց ի վեր և մինչ օրս պաշտոնական իսլամից դուրս գործող կրոնական քարոզիչների, ինչպես նաև կրոնականացված տարրերի նկատմամբ իրականացվել են տարաբնույթ ճնշումներ: Ադրբեջանում ներկայումս արգելված է իսլամական գլխաշորով (հիջաբ) մուտք գործել կրթական հաստատություններ, պաշտոնական փաստաթղթերի համար գլխաշորով նկարվել: Իսլամական աղոթքի հրապարակային դրսևորումները կանխելու նպատակով 2008թ. արգելվել է մզկիթի բակում կամ բաց տարածքներում աղոթելը[1]:

2009թ. հունիսի վերջին Ադրբեջանի խորհրդարանը կրոնի դավանման ազատության մասին օրենքում փոփոխություններ մտցրեց, համաձայն որի՝ արտերկրում աստվածաբանական կրթություն ստացած անձանց արգելվում է իսլամական կրոնական արարողություններ վարելը[2]: Դրանք կարող են իրականացնել միայն Ադրբեջանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր կրոնական կրթություն են ստացել Ադրբեջանում: Այդ գործընթացի վարումն ամբողջովին փոխանցվեց Կովկասի մուսուլմանների վարչությանը (ԿՄՎ): Այդպիսով, իշխանությունները փորձեցին օրենքի ուժով կասեցնել որոշակիորեն ընդ-

[1] Власти Азербайджана подтвердили запрет на намаз в открытых местах, http://www.kavkaz-uzel.ru/articles/141150

[2] В Азербайджане запретили проведение исламских религиозных церемоний лицами, получившими теологическое образование за рубежом
http://www.interfax-religion.ru/aze/?act=news&div=30841

դիմադիր հոգևորականների, ինչպես նաև Ադրբեջանի համար ոչ ավանդական կրոնական ուղղությունների քարոզիչների գործունեությունը:

Հայտնի է, որ Ադրբեջանի անկախացումից ի վեր բազմաթիվ երիտասարդներ կրոնական կրթություն են ստացել իսլամական աշխարհի տարբեր, այդ թվում՝ սուննիական աստվածաբանական կենտրոններում, ինչը նաև իրականացվել է պաշտոնական խողովակներով: Նրանց մեջ կան բավական խարիզմատիկ գործիչներ, որոնցից է Բաքվի «Աբու Բաքր» մզկիթի երիտասարդ իմամ, սուննի իսլամի սալաֆիական ուղղության քարոզիչ Հաջի Համեթ Սուլեյմանովը, ով աստվածաբանական կրթություն է ստացել Սաուդյան Արաբիայում:

Վերջերս Ադրբեջանի հասարակական առանձին շրջանակներում դժգոհությունների ալիք առաջացրին մի քանի մզկիթների փակման և քանդելու մասին իշխանությունների որոշումները: Դրանք քննարկման առարկա դարձան սեպտեմբերի 7-ին Բաքվում «Խղճի և կրոնի դավանության ազատության պաշտպանության կենտրոնի» *(DEVAMM)* նախաձեռնությամբ «Իսլամական մշակույթի մայրաքաղաքի մզկիթների քանդումը» խորագրով կազմակերպված մամլո ասուլիսի ժամանակ[1]: Բանախոսների համոզմամբ՝ միայն 2009թ. երեք մզկիթ քանդելու իրողությունն աննախադեպ է, ինչը հեղինակազրկում է Ադրբեջանն իսլամական աշխարհում, այն դեպքում, երբ 2009-ին Բաքուն Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) կողմից հայտարարվել է իսլամական մշակույթի մայրաքաղաք:

Նախ՝ ապրիլի 25-ին Բաքվում բարեկարգման հիմնավորմամբ փակվեց Շեհիդլար մզկիթը, որ կառուցվել էր Թուրքիայի կրոնական վարչության կողմից: Դրանից հետո քանդվեց Բաքվի Մուհամեդ մարգարեի մզկիթը՝ որպես «անօրինական շինություն»: Որոշ փորձագետներ մզկիթի քանդումը կապեցին կրոնական ծայրահեղականության վտանգի և ապրիլին Ադրբեջանի պետական նավթային ակադեմիայում կազմակերպված ահաբեկչության հետ: Մայիսի 10-ին փակվեց և մյուս օրը լուսադեմին քանդվեց 1940-ականների վերջերին Կասպից ծովի ափին գտնվող «Նավթային քարեր» վայրում կառուցված մզկիթը: Դեպքի կապակցությամբ Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի կոմիտեի նախագահը հավաստիացրել էր, որ մզկիթը քանդվել է տեխնիկական անվտանգության շարժառիթով, քանի որ կառուցված է եղել կավային գրունտի վրա: Եվ միայն վերջերս իշխանությունները որոշում ընդունեցին քանդել Բաքվի «Ֆատիմեի-Զահրա» մզկիթը: Հատկանշական է, որ մզկիթը քանդելու մասին տնտեսական դատարանի որոշումը համընկավ Ռամադան ամսվա հետ, ինչը դիտարկվում է որպես անարգանք հավատացյալների հասցեին:

«Ֆատիմեի-Զահրա» մզկիթի կրոնական համայնքի ղեկավար Հաջի Սեյի-

[1] Мусульмане Азербайджана критикуют снос мечети "Фатмаи-Захра", http://www.kavkaz-uzel.ru/articles/159047

դի պարզաբանմամբ՝ իրենք 1996թ. գնել են հողը և մինչև 1998թ. հավաքել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա ձեռնամուխ եղել շինարարությանը, որը որոշ ժամանակ ընդհատվել է ֆինանսական դժվարությունների պատճառով: Իսկ երբ շինարարությունն այլևս ավարտին է հասել, դատարանը որոշել է քանդել այն՝ որպես «անօրինական կառույց»: Շատերի կարծիքով՝ մզկիթը քանդելու իրական պատճառը դրա տարածքը վաճառքի հանելն է:

Գրեթե բոլոր բանախոսները միակարծիք էին այն հարցում, որ մզկիթ քանդելը հանցանք է և մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում: DEVAMM-ի նախագահ, շիա հոգևորական, իրավապաշտպան Ի.Իբրահիմզոլին նույնիսկ վկայակոչեց ԻԿԿ պարագան՝ նշելով, որ միջազգային այդ կազմակերպության դիրքորոշումն Ադրբեջանի նկատմամբ կարող է փոխվել, մինչդեռ վերջինս միջազգային մակարդակում, որպես կանոն, ակտիվորեն աջակցել է Ադրբեջանին: Իբրահիմզոլու համոզմամբ՝ նույնիսկ խորհրդային ժամանակներում իշխանությունները թույլ չէին տա, որպեսզի կարճ ժամանակահատվածում միանգամից երեք մզկիթ քանդվի: Մզկիթները փակվում էին, բայց չէին քանդվում: Նրա համոզմամբ՝ Ադրբեջանի ապագա սերունդը մեծանում է մզկիթներ քանդող երկրի քաղաքացու բարդույթով:

«Մեշեդի Դադաշ» մզկիթի համայնքի ղեկավար Հաջի Շահին Ղասանլիի կարծիքով՝ երկու մզկիթների քանդումն ինչ-որ տեղ կարելի է համարել պատահականություն, սակայն երրորդի պարագայում խոսքը կրոնի դեմ նպատակաուղղված միտման մասին է: Նա մզկիթների քանդումը համարեց ոչ միայն հավատացյալների, այլև ողջ ադրբեջանական հասարակության խնդիրը: Հաջի Շահինի կարծիքով՝ Ադրբեջանում տագնապում են, որ, օրինակ, Շուշիի մզկիթը գտնվում է ողբալի վիճակում, բայց այն քանդված չէ[1]:

Նշենք, որ 2008թ. օգոստոսին իշխանությունները փակեցին նաև «Աբու Բաքր» մզկիթը՝ պատճառաբանելով, որ նույն տարվա օգոստոսի 17-ին մզկիթի դեմ իրականացված ահաբեկչությունից հետո այն այլևս անվտանգ չէ հավատացյալների համար: Սակայն իրականում իշխանություններին մտահոգում էր երկրում սալաֆիականության[2] ընդլայնման փաստը: Խնդիրն այն է, որ Ադրբեջանում գաղափարախոսական բացը փորձ է արվում լրացնել առանձին մզկիթներում, որոնք խոսքի ազատության բացակայության պայմաններում դառնում են յուրօրինակ քաղաքական ակումբներ:

Հատկանշական է, որ Ադրբեջանում իսլամին առնչվող խնդիրների քննարկումների ժամանակ շատ դեպքերում քննադատության թիրախ է դառնում պաշտոնական իսլամը ներկայացնող Ադրբեջանի հոգևոր առաջնորդ, ԿՄՎ նախագահ Ալլահշյուքյուր Փաշազադեն, ով համարվում է իսլամի հարցում իշխանությունների գծի աջակիցը: Շատերը Փաշազադեին համարում են կո-

[1] Մանրամասն տե՛ս *Ф.Теймурханлы,* Затянувшееся молчание шейха, Газета "Зеркало", 02.09.2009.
[2] Սալաֆիականությունը սուննի իսլամի արմատական ուղղություններից մեկն է, որ կոչ է անում վերադառնալ վաղ իսլամի ակունքներին կամ նախահայրերի /աս-սալաֆ/ հավատքին:

ռումպացված գործիչ, ով առաջնային է համարում ոչ թե իսլամի, այլ՝ սեփական շահերը: Այդ տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում «Ֆատիմեի-Զահրա» մզկիթի փակման կապակցությամբ Փաշազադեին ուղղված Ի.Իբրահիմօղլու նամակը, որում վերջինս խիստ մտահոգություն է հայտնում Ռամադան ամսին մզկիթի փակման համար՝ զգուշացնելով անդրերկրային կյանքում դրա հետևանքների մասին և խնդրում աջակցել: «Թուրան» գործակալությանը տված հարցազրույցում շեյխուլիսլամը նշել է, որ տեղյակ է խնդրին և կանի ամեն ինչ, որպեսզի մզկիթը չքանդվի:

Նշենք, որ Ադրբեջանի համար որոշակի վտանգ է ներկայացնում նաև իսլամական արմատականությունը, որն Ադրբեջան է ներթափանցում նաև Հյուսիսային Կովկասից: Ասվածի ապացույցը դաղստանյան ծագում ունեցող «Անտառային եղբայրներ» արմատական կազմակերպության գործունեությունն էր Ադրբեջանում: Վերջին շրջանում Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններում տեղի ունեցող ահաբեկչությունները և իսլամական գործոնով պայմանավորված ներքաղաքական անկայունությունը տագնապի ալիք են ստեղծել նաև Ադրբեջանում: Կրոնական ծայրահեղականության հնարավոր տարածումն այդ երկրում մտահոգություն է առաջացրել հասարակական գրեթե բոլոր շրջանակներում, ինչը փորձում են փարատել իշխանությունները: Ադրբեջանի պետական սահմանային ծառայության ղեկավար Է.Գուլիևը օգոստոսի 18-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ Ռուսաստանի և Ադրբեջանի սահմանը հյուսիսային շրջանում ամբողջովին վերահսկվում է: Իսկ օգոստոսի 19-ին Ադրբեջանի կրոնական կառույցների հետ աշխատանքի պետական կոմիտեի մամլո քարտուղարը նշել է, որ Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող դեպքերն Ադրբեջանի համար վտանգ չեն ներկայացնում ո՛չ կրոնական իրավիճակի, ո՛չ էլ կրոնական խմբերի գործունեության տեսանկյունից: Սակայն միշտ չէ, որ իշխանությունների հավաստիացումները միանշանակ են ընդունվում: Ադրբեջանցի լրագրող Ջ.Բայրամովայի կարծիքով՝ գաղափարախոսությունը հզոր երևույթ է և կարող է հաղթահարել ցանկացած պատնեշ[1]:

Ադրբեջանի հասարակական-քաղաքական և կրոնական առանձին գործիչներ համոզված են, որ կրոնական ծայրահեղականությունն Ադրբեջանում այլևս տարածում է ստացել: Սոցիալ-դեմոկրատական կուսակցության համանախագահ Ա.Ալիզադեի համոզմամբ՝ Ադրբեջանի կրոնական իրավիճակի վրա ակնհայտ է Հյուսիսային Կովկասի ազդեցությունը[2]:

Պատահական չէ, որ Ադրբեջանում վերջին շրջանում շատ է քննարկվում կրոնական ծայրահեղականության հնարավոր ալիքը կանխելու հարցը: Հատկանշական է, որ այդ հարցում մոտեցումները տարբեր են: Կան տեսակետներ,

[1] *Дж.Байрамова,* Может ли волна исламского радикализма перекинуться и на Азербайджан? http://www.zerkalo.az/2009-08-20/politics/1946-islam-radikalism-kavkaz
[2] Նույն տեղում:

որոնք սպասարկում են իշխանության քաղաքականությանը՝ փորձելով հիմնավորել կոշտ միջոցառումների անհրաժեշտությունը:

Սակայն կան նաև այլ տեսակետներ, որոնք դեմ են ուժային մեթոդներին և առաջ են քաշում այլ ուղիներ, մասնավորապես, բարեփոխումների գաղափարը: Համեթ Սուլեյմանովի համոզմամբ՝ իրավապահ մարմինների կողմից իսլամական արմատականության կանխումն անընդունելի է, քանի որ արդյունավետ չէ և հակառակ արդյունքը կունենա: Շահին Ղասանլիի կարծիքով՝ արգելելը ոչինչ չի տա, անհրաժեշտ է կրոնի մասին օրենքում լուրջ բարեփոխումներ մտցնել, երկրում զարգացնել կրոնական լուսավորչականությունը: Նրա համոզմամբ՝ փորձը ցույց է տալիս, որ կրոնական արմատականությունը մեծ թափ է ստանում կրոնի ազատության իրավունքները ոտնահարելու պարագայում, իսկ այդ դեպքում հասարակությունն ու երկիրը արմատականության տեսանկյունից ավելի խոցելի են դառնում[1]:

Ադրբեջանցի իսլամագետ Էլմիր Կուլիևի կարծիքով՝ կրոնական մշակույթը երկրում զարգացած չէ: Կրոնական ծայրահեղականության դեմ պայքարի հարցում Կուլիևն ունի սեփական տեսակետը: Ըստ նրա՝ կրոնական արժեքները պետք է մեկնաբանեն ոչ թե փոքրաթիվ կրոնական խմբերն ու արտերկրից ժամանած միսիոներները, այլ հենց ադրբեջանցի մտավորականները: Նրա կարծիքով, եթե մարդիկ խորքից հասկանան իսլամը, ապա դժվար կլինի նրանց խաբել իսլամական սպառնալիքի մասին լեգենդներով, իսկ աղանդավորների քարոզներն Ադրբեջանում այլևս պահանջարկ չեն ունենա[2]:

Ադրբեջանում տարածում ունեցող առանձին տեսակետների համաձայն՝ իշխանություններն իսլամին վերաբերող հարցերում չեն կարողանում ճիշտ կողմնորոշվել, իսկ կրոնական իրավիճակի ներկա կայունությունը խիստ հարաբերական է: Այնպես որ, իսլամն Ադրբեջանում որոշակի պոտենցիալ ունի՝ դառնալու լուրջ գործոն հասարակական-քաղաքական զարգացումներում:

Արդբեջանցի վերլուծաբան Արիֆ Յունուսովի կարծիքով՝ իսլամն Ադրբեջանում ներկայումս զբաղեցնում է այն վակուումը, որը ժամանակին, մինչև 2005թ. խորհրդարանական ընտրությունները, զբաղեցնում էր արևմտամետ ընդդիմությունը, որին իշխանությունները դուրս մղեցին քաղաքական դաշտից: Նման իրավիճակ ստեղծվեց նաև Ուզբեկստանում, որտեղ իշխանությունների կողմից դուրս մղված ընդդիմության տեղը զբաղեցրեց միջազգային իսլամական արմատական շարժումներից մեկը՝ «Հիզբ ութ-թահրիրը»: Ըստ Յունուսովի՝ Ադրբեջանում փաստորեն պայքար է ծավալվում միայն երկու գաղափարախոսությունների՝ հեյդարիզմի և իսլամիզմի միջև:

[1] Элементы исламского радикализма в Азербайджане могут зародить волну экстремизма, http://analitika.at.ua/news/2009-08-21-12713

[2] Интервью с известным исламоведом Эльмиром Кулиевым, www.rus.azadinform.az/index.php?dn=news&to

«ԳԼՈԲՈՒՍ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ամսագիր

Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221՝ տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 24.11.2009թ.
Թիվ 6, 2009թ.
Տպաքանակը՝ 200։

Ֆորմատը՝ 70x100 1/16։ Պայմանական 4 մամուլ։
Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում